

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ)
ԿՐԹՈՒԹՅԱՆ**

0214.04.4 «ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺԱՆՅԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

0214.04.03.4 «ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՂ-ԺԱՆԵԿԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2020

| | | | | | | | | | | | | | |
|----|---|----|--|-------------|-----------|------------|--|--|--|--|--|------------|------------|
| | կատարելու կարողություններ | | | | | | | | | | | | |
| 5. | Ժանյակի տեսակներով աշխատանքներ կատարելու կարողություններ | 6տ | | 72 | 16 | 56 | | | | | | | 72 |
| 6. | Գեղարվեստական-գեղանկարչական ասեղնագործություն կատարելու կարողություններ | 6տ | | 72 | 16 | 56 | | | | | | | 72 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | 528 | 81 | 290 | | | | | | 96 | 276 |
| 5. | ԸՆՏՐՈՎԻ | 6տ | | 18 | | | | | | | | | 18 |
| | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ | | | 8 | | | | | | | | 6 | 2 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | 1080 | | | | | | | | 540 | 540 |
| | ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | 100 | | | | | | | | | |
| | Շաբաթվա ժամերի քանակը | | | | | | | | | | | 36 | 36 |

| IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ | | | N | VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԿԱԲԻՆԵՏՆԵՐ | |
|---|--|----------|-------------------------|---|--|
| 1. | Ընտանեկան կյանքի նախապատրաստում | | 1. | Հայոց լեզվի և խոսքի մշակույթի | |
| 2. | Տարիքաչափին հոգեբանություն | | 2. | Օտար լեզվի | |
| | | | 3. | Սոցիալ տնտեսագիտական և բնագիտական առարկաների | |
| | | | 4. | Ասեղնագործության էքսիզիկորման և նախագծման | |
| | V. ՊՐԱԿՏԻԿԱ | Կիսամյակ | Շաբաթ | 5. | Ասեղնագործության նյութերի, սարքավորումների և գործիքների, |
| 1. | Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման | 5,6 | 4 | 6. | Անհատական համակարգիչների և մեքենասարքավորումների |
| 2. | Նախաավարտական պրակտիկա | 6 | 4 | | |
| 3. | ԸՆԴԱՄԵՆԸ | | 8 | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ |
| VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ Համալիր պետական քննություն ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլներից /հունիսի 29-ից հուլիսի 5-ը / | | | 1. | | |
| | | | 2. | | |
| | | | ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐ | | |
| | | | 1. | Ասեղնագործության և ժանեկագործության արհեստանոց: | |
| | | | 2. | | |
| | | | ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ | | |
| | | | 1. | Մարզադահլիճ | |
| | | | 2. | Մարզահրապարակ | |

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

- Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/

ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը քոլեջը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Ուսումնական հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

| | |
|-------------------------------------|--|
| Մոդուլի դասիչը | ԱՀ-Հ-4-20-001 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը: |
| Մոդուլի տևողությունը | 36 ժամ, որից տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 26 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն |
| Ուսումնառության արդյունքները | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2) կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, 3) կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, 4) ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, 5) խթանի համագործակցության ձևավորումը, ստեղծի նախապայմաններ շարունական գործընկերության համար: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար |
| Կատարման չափանիշներ | 1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, |

| | |
|--|--|
| | <p>4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,</p> <p>5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:</p> |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 2 | Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը |
| Կատարման չափանիշներ | <p>1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,</p> <p>3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,</p> <p>4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է,</p> <p>5) մասնակցում է քննարկումների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:</p> |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու</p> |

| | |
|--|--|
| | <p>պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ |
| Ուսումնառության արդյունք 3 | Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, 4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու |

| | |
|--|---|
| | <p>պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 4 | <p>Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում</p> |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստատիրոջ, 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, 3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, 6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը, 7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման</p> |

| | |
|--|---|
| | <p>ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| Ուսումնառության արդյունք 5 | Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն), 2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքում է անհրաժեշտ տեղեկատվություն, 3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն, 6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: |

| | |
|--|---|
| | Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները: |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» | |
| Մոդուլի դասիչը | ԱՀ-ԱԱՕ-4-20-001 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ: |
| Մոդուլի տևողությունը | 36 ժամ, որից տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն |
| Ուսումնառության արդյունքները | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2) կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան, 3) կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 4) ցուցաբերի առաջին օգնություն: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները |

| | |
|--|---|
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի առնվազն 10 առաջադրանքով թեստ, որում նա պետք է ընտրի տվյալ իրավիճակի ճիշտ պատասխանը:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է ճիշտ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 2 | <p>Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան</p> |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական), |

| | |
|--|--|
| | <p>2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),</p> <p>3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,</p> <p>4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:</p> |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 3 | <p>Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ</p> |
| Կատարման չափանիշներ | <p>1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,</p> <p>2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,</p> <p>3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,</p> <p>4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:</p> |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված</p> |

| | |
|--|---|
| | <p>միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումների բաղադրիչներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 4 | Ցուցաբերել առաջին օգնություն |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, 2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում, 3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն, 4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, 5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, 6) տարբեր կտորվածքների դեպքում կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն, 7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության գործողությունները: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում բոլոր հանձնարարությունները:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ</p> |

| | |
|--|--|
| | անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ» | |
| Մոդուլի դասիչը | ԱՀ-ՀՕ-4-20-001 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները: |
| Մոդուլի տևողությունը | 36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 32 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| Ուսումնառության արդյունքները | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) կիրառի համակարգչային համալիրում ներառվող բաղադրիչները և օպերացիոն համակարգը, 2) խմբագրի և ֆորմատավորի տեքստեր, 3) պատրաստի և խմբագրի աղյուսակներ, 4) կատարի գրաֆիկական խմբագրում և նկարազարդում, 5) համակարգչային ծրագրերով կազմակերպի ցուցադրություն, 6) աշխատի համացանցում: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |

| | |
|--|--|
| Ուսումնառության արդյունք 1 | Կիրառել համակարգչային համալիրում ներառվող բաղադրիչները և օպերացիոն համակարգը |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) համակարգչային համալիրում ներառվող հիմնական և լրացուցիչ բաղադրիչները բնութագրում է, 2) ճիշտ է պահպանում համակարգիչը և բաղադրիչները միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմանները, 3) օգտվում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից, 4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը, 5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը, 6) բացում է առաջադրված թղթապանակը և ֆայլը, 7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից, 8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում, 9) կատարում է փաստաթղթի տպագրում: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր: |
| Ուսուցման երաշխավորված | տեսական ուսուցում՝ 2 ժամ |

| | |
|--|--|
| Ժամաքանակը | գործնական աշխատանք՝ 4 ժամ |
| Ուսումնառության արդյունք 2 | Խմբագրել և ֆորմատավորել տեքստեր |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար ծրագրերը պատրաստել է, 2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, 3) տեքստային ցուցիչը տեղաշարժելով կատարելում է ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, փոփոխություններ, 4) մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորման գործողությունները ճիշտ է կատարում, 5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները: |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | գործնական աշխատանք՝ 4 ժամ |
| Ուսումնառության արդյունք 3 | Պատրաստել և խմբագրել աղյուսակներ |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) աղյուսակներ կազմելու համակարգչային ծրագրերը և դրանց կիրառումը ներկայացնում է, 2) առաջադրված չափերով կազմում է աղյուսակ և մուտքագրում տվյալներ, 3) աղյուսակում կատարում է ուղղումներ, լրացումներ, փոփոխություններ, 4) աղյուսակի տվյալների մեջ ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու: |

| | |
|--|--|
| | <p>գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաքանակային գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| Ուսումնառության արդյունք 4 | Կատարել գրաֆիկական խմբագրում և նկարազարդում |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով նաև Autoshares պատուհանի պատրաստի ձևերը, 2) գծագրում է կանոնավոր պատկերներ, 3) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, 4) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, 5) գծագրում է տեքստային բլոկներ, 6) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր: |

| | |
|--|---|
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| Ուսումնառության արդյունք 5 | Համակարգչային ծրագրերով կազմակերպել ցուցադրություն |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը ճիշտ է ներկայացնում, 2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ, 3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, 4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար, 5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝ թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| Ուսումնառության արդյունք 6 | Աշխատել համացանցում |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է «համացանց» հասկացությունը, 2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը, |

| | |
|--|--|
| | <p>3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը,</p> <p>4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),</p> <p>5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,</p> <p>6) գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում,</p> <p>7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացիա:</p> |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթակա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ» | |
| Մոդուլի դասիչը | ԱՀ-Ձ-5-20-001 |
| Մոդուլի նպատակը | <p>Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել բիզնես գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գործնական հմտություններ: Դրանք ներառում են ինքնուրույն բիզնես կազմակերպելու և վարելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացման հմտություններ, որոնցում հաշվի է առնված ինչպես գործարար ոլորտին հատուկ սկզբունքները, այնպես էլ բիզնես գործունեությունը կարգավորող իրավական դաշտի առանձնահատկությունները</p> |

| | |
|-------------------------------------|--|
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 22 ժամ գործնական աշխատանք՝ 50 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլի 1 և 2 ուսումնառության արդյունքներն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ: Մյուս ուսումնառության արդյունքների ուսումնասիրությունը նպատակահարմար է իրականացնել որոշակի մասնագիտական մոդուլներ յուրացնելուց հետո, որպեսզի դրանց գործնական ձեռքբերումները օգտագործվեն համապատասխան ծրագրեր մշակելու համար: |
| Ուսումնառության արդյունքները | <p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը 2) ներկայացնի կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը 3) կատարի շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ 4) բնութագրի կազմակերպության ռեսուրսները և գնահատի օգտագործման արդյունավետությունը 5) կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորի ապրանքի /ծառայության/ գինը 6) մշակի բիզնես պլան և գործողությունների ծրագիր 7) հաշվի հարկեր, տուրքեր, կազմի ֆինանսական հաշվետվություններ |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է |
| Ուսումնառության արդյունք 1 | Ներկայացնել հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) բիզնես-գործունեության էությունը ճիշտ է մեկնաբանում, 2) բիզնես-գործունեության տեսլականը, նպատակը և ռազմավարությունը ճիշտ է սահմանում, 3) բիզնես-գործունեության համար նախընտրելի անձնային հատկանիշների կարևորությունը հիմնավորում է, 4) բիզնես-գործունեության համար սեփական հնարավորությունների գնահատումը ճիշտ է, 5) բիզնես-գաղափարի էությունը ճիշտ է մեկնաբանում, 6) բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացի բաղադրիչների իմաստը ճիշտ է մեկնաբանում, |

| | |
|---|---|
| | <p>7) ըստ իրավիճակների հիմնավորում է ձևավորված բիզնես-գաղափարները,</p> <p>8) բիզնես-գաղափարի տարբերակի գնահատումը ճիշտ է:</p> |
| <p>Գնահատման միջոցը</p> | <p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և անհատական գործնական առաջադրանքների հիման վրա: Քննարկումների ընթացքում բացահայտվում է բիզնես-գաղափարի և բիզնես-գործունեության հիմնական հասկացությունների վերաբերյալ ուսանողների յուրացրած գիտելիքների մակարդակը, իսկ գործնական հանձնարարությունների միջոցով նրանք ըստ իրավիճակի ներկայացնում և հիմնավորում են կոնկրետ բիզնես-գաղափար, որոշակիացնում են իրենց նախընտրած գործունեության տեսակը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Բիզնես-գաղափարը որպես բիզնես-գործունեության մեկնակետ, դրա ձևավորման նախադրյալները: Բիզնես-գաղափարի իրատեսությունը հիմնավորող ցուցիչները: Օրենսդրական դաշտի պահանջները հաշվի առնելու կարևորությունը: Գործարար միջավայրի օբյեկտիվ գնահատման կարևորությունը և մոտեցումները: Սեփական գործարար հնարավորությունների բացահայտումը և անաչառության կարևորությունը: Բիզնես-գործունեության համար նախընտրելի ոլորտի ընտրությունը: Տեսլականի, նպատակի և ռազմավարության հստակ և հիմնավորված ձևակերպումը: Վերջնական բիզնես-գաղափարի գնահատումը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե քննարկումների ընթացքում ուսանողը ցուցաբերում է հիմնավորված եզրահանգումներ անելու ունակություն, իսկ գործնական առաջադրանքների ընթացքում ներկայացնում է տվյալ իրավիճակում առավել նախընտրելի ու հիմնավորված լուծումներ:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքների անհրաժեշտ փուլերում անհրաժեշտ է կիրառել մտագրոհի տեխնիկան՝ հետագա քննարկման ուղղությունները ձևավորելու համար:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ֆլիպչարտ, գունավոր թղթեր, ամրակներ, տարբեր գույնի մարկերներ, ուսուցողական իրավիճակների նկարագրեր, բիզնես-գաղափարների հաջողված օրինակներ, տեսլականի, նպատակի և ռազմավարության ուսուցողական ձևակերպումներ՝ նաև ոչ հստակ ձևակերպված:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված</p> | <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> |

| | |
|-----------------------------------|---|
| Ժամաքանակը | գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| Ուսումնառության արդյունք 2 | Ներկայացնել կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) կազմակերպության կազմակերպչա-իրավական ձևերի բնութագիրը ճիշտ է, 2) կազմակերպության աշխատանքը կարգավորող իրավական ակտերի պահանջների ընկալումը ճիշտ է, 3) կազմակերպության ստեղծման քայլերի հաջորդականությունը ճիշտ է մեկնաբանում, 4) կազմակերպության ստեղծման համար պահանջվող փաստաթղթերի ձևավորումը ճիշտ է, 5) կազմակերպության կառավարման անհրաժեշտությունը և խնդիրները ճիշտ է մեկնաբանում, 6) կառավարման ֆունկցիաների բնութագրերը ճիշտ է, 7) կառավարման ոճերի բնութագրերը ճիշտ է, 8) կառավարման ֆունկցիոնալ բաժինների ձևավորման մոտեցումները ճիշտ է, 9) աշխատատեղերի ձևավորման և պարտականությունների բաշխման մոտեցումները հիմնավոր է, 10) աշխատողների ընտրության կարգը հիմնավոր է, 11) կազմակերպության կառավարմանն առնչվող փաստաթղթերի ձևավորումը ամբողջական և հիմնավոր է, 12) կնքվելիք պայմանագրերի կազմը և բովանդակությունը իրավաբանորեն ճիշտ է, 13) կառավարման արդյունավետության գնահատման մոտեցումները հիմնավոր է: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարականների հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվում է տարբեր կազմակերպչա-իրավական ձև ունեցող կազմակերպությունների, դրանց կառավարման առանձնահատկությունների վերաբերյալ ուսանողի գիտելիքները, իսկ գործնական հանձնարարությունների միջոցով ուսանողը պետք է տրված պայմաններին համապատասխան կազմի տարբեր փաստաթղթեր: Գործնական հանձնարարությունները նպատակահարմար է առաջադրել ըստ ուսուցման փուլերի:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Կազմակերպության հասկացությունը և բնութագիրը: Կազմակերպությունների տիպերը, դրանց բնութագրիչ առանձնահատկությունները: Կազմակերպությունների ստեղծման ու գրանցման կարգը: Գործընթացի օրենսդրական կարգավորումը: Կազմակերպության կանոնադրությունը: Կազմակերպության կառավարման խնդիրները,</p> |

| | |
|---|---|
| | <p>Ֆունկցիաները: Կառավարման ոճերը, դրանց առանձնահատուկ գծերը: Կառավարման ապարատի կառուցվածքը, ստորաբաժանումները: Կառավարման բաժինների առանձնացման սկզբունքները: Աշխատանքի բաժանման անհրաժեշտությունը, աշխատատեղերի ձևավորման մոտեցումները տարբեր մեծության կազմակերպություններում: Կազմակերպության փաստաթղթային տնտեսության ընդհանուր բնութագիրը, փաստաթղթերի ձևավորման կարգը: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե թեստային առաջադրանքները կատարվում է հիմնականում ճիշտ, ոչ էական թերություններով, իսկ գործնական առաջադրանքները տրված պայմաններին համապատասխան կատարվում է ճիշտ:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է կիրառել առանձին իրավիճակների խմբային քննարկումներ: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական ու ցուցադրական նյութեր, տարբեր փաստաթղթերի նմուշներ, առանձին կազմակերպություններում աշխատանքի բաժանման, աշխատողների ֆունկցիաների սահմանման օրինակներ:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p> | <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p> |
| <p>Ուսումնառության արդյունք 3</p> | <p>Կատարել շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ</p> |
| <p>Կատարման չափանիշներ</p> | <ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է մեկնաբանում «շուկա» հասկացությունը, 2) շուկայի հետազոտման անհրաժեշտությունը հիմնավորում է, 3) շուկայի հետազոտման հիմնական ուղղությունները բացահայտում է, 4) շուկայի հետազոտման գործընթացի փուլերը ճիշտ է բնութագրում, 5) ըստ փուլերի շուկայի հետազոտման մեթոդների ընտրությունը հիմնավոր է, 6) շուկայական պահանջարկի ծավալի բացահայտման մոտեցումները ճիշտ է, 7) շուկայի վրա ազդող գործոնների և գնորդի վարքագծի գնահատումը ճիշտ է, 8) շուկայական մրցակցության գնահատումը հիմնավոր է, 9) շուկայի հատվածավորումը իրատեսական է, 10) մարքեթինգի գաղափարների /4P և 7P/ նշանակությունը ճիշտ է բացահայտում, |

| | |
|--|---|
| | 11) մարքեթինգային ռազմավարության մշակման մոտեցումները հիմնավորված է: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է թեստային առաջադրանքների, խմբային քննարկումների և գործնական հանձնարարությունների հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվելու է շուկայի վերաբերյալ հիմնական հասկացությունների ճիշտ ընկալման ուսանողի կարողությունը, իսկ գործնական առաջադրանքների միջոցով նա կատարելու է իրավիճակին համապատասխան եզրահանգումներ /հնարավորության դեպքում կարող են օգտագործվել նաև ուսանողների ինքնուրույն դիտարկումների ու հետազոտությունների արդյունքները/:</p> <p>Արդյունքները անհրաժեշտ է քննարկել խմբում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Շուկայի բնութագիրը: Շուկայի հետազոտության անհրաժեշտությունը և հիմնական ուղղությունները: Շուկայի հետազոտության գործընթացը: Շուկայական պահանջարկի գնահատումը: Շուկայի վրա ազդող գործոնները, գնորդի վարքագիծը: Մրցակցություն, դրա գնահատումը: Շուկայի հատվածավորումը: Մարքեթինգի 4 և 7 P-երը: Մարքեթինգային ռազմավարության էությունը և մշակման կարևորությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը թեստային և գործնական առաջադրանքները ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում, իսկ խմբային քննարկումների ընթացքում ցուցաբերում է իրավիճակին հիմնավորված արձագանքելու ունակություններ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ամբողջ ուսուցման ընթացքում ըստ իրավիճակների անհրաժեշտ է կիրառել մտագրոհի տեխնիկան:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, շուկայական իրավիճակների նկարագրեր, տիպական իրավիճակներում առավել հիմնավորված լուծումների օրինակներ, գործնական կիրառություն ունեցող փաստաթղթերի նմուշներ:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 4 | Բնութագրել կազմակերպության ռեսուրսները և գնահատել օգտագործման արդյունավետությունը |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) կազմակերպության ռեսուրսների կազմը և կառուցվածքը ճիշտ է բացահայտում, 2) կազմակերպության ռեսուրսների խմբերի միջև օպտիմալ հարաբերակցության ապահովման անհրաժեշտությունը |

| | |
|--------------------------------|--|
| | <p>հիմնավորում է,</p> <ol style="list-style-type: none"> 3) նյութական ռեսուրսների խմբերի տնտեսագիտական բնութագրերը ճիշտ է, 4) աշխատանքային ռեսուրսների բնութագիրը և դրանց առընչվող ցուցանիշների մեկնաբանությունը ճիշտ է, 5) աշխատանքի տեխնիկական նորմավորման էությունը ճիշտ է բացատրում, նորմաների մեծության ձևավորման մեխանիզմը ճիշտ է ներկայացնում, 6) ֆինանսական ռեսուրսների հետ կապված հասկացությունների բացատրությունը ճիշտ է, 7) ֆինանսական ռեսուրսների համալրման աղբյուրների առանձնահատկությունները ճիշտ է մեկնաբանում, 8) ռեսուրսների պահանջվելիք մեծության հաշվարկման մոտեցումները հիմնավոր է, 9) հիմնական կապիտալի առանձին խմբերի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է, 10) շրջանառու կապիտալի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է, 11) աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է, 12) ռեսուրսների օգտագործման վերաբերյալ պարզ վերլուծական գործողությունները և ըստ արդյունքների եզրահանգումները հիմնավոր է: |
| <p>Գնահատման միջոցը</p> | <p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ ռեսուրսների տարբեր խմբերի հաշվել առավել ընդհանուր նշանակություն ունեցող ցուցանիշները: Նպատակահարմար է գործնական առաջադրանքները հանձնարարել փուլերով՝ ըստ ռեսուրսների խմբերի: Քննարկումների ընթացքում նրանք ոչ միայն գնահատելու են ստացված արդյունքները, այլ նաև առաջարկելու են լուծումների սեփական տարբերակները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Կազմակերպության ռեսուրսների ընդհանուր բնութագիրը: Նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներ, դրանց կազմը: Հիմնական կապիտալ և շրջանառու կապիտալ: Ֆինանսական ռեսուրսներ: Ռեսուրսների</p> |

| | |
|--|--|
| | մեծությունը բնութագրող ցուցանիշները: Ռեսուրսների օգտագործման մակարդակը բնութագրող ցուցանիշները: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքները մեթոդապես ճիշտ են կատարվում: |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, գործնական հանձնարարությունների փաթեթներ: |
| Ռիսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| Ռիսումնառության արդյունք 5 | Կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորել ապրանքի /ծառայության/ գինը |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) «ծախս» հասկացության բովանդակությունը ճիշտ է մեկնաբանում, 2) տարբերակում է ծախսերի խմբերը, 3) ծախսերը հիմնավորող փաստաթղթերի տեսակները և վավերապայմանները ճիշտ է ներկայացնում, 4) ծախսերի տարբեր խմբերի հաշվապահական ձևակերպումները ճիշտ է, 5) ապրանքների տարբեր տեսակների և ծառայությունների տարբեր խմբերի համար պահանջվող ծախսերի կազմը հիմնավոր է ներկայացնում, 6) ապրանքի կամ ծառայության ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերի հոդվածները ճիշտ է ներկայացնում, 7) ինքնարժեքի տարբեր հոդվածների մեծության հաշվարկման մեթոդաբանությունը ճիշտ է կիրառում, 8) հաշվում է ապրանքի կամ ծառայության միավորի ինքնարժեքը, 9) ինքնարժեքի իջեցման հնարավորությունները ճիշտ է գնահատում, 10) ինքնարժեք-շուկայական գին մարժայի տարբերության հիմնավորումը ճիշտ է, 11) անհատական գնից շուկայական գնի անցման տրամաբանությունը բացատրում է: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առաջադրանքի հիման վրա: Ռիսանողներին հանձնարարվելու է ըստ ծախսերի առանձին հոդվածների կատարել միավոր արտադրանքի կամ ծառայության համար դրանց հաշվարկներ և որոշել ինքնարժեքն ու գինը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերի հասկացությունը: Ուղղակի և |

| | |
|--|--|
| | անուղղակի ծախսեր, կայուն և փոփոխական ծախսեր: Ծախսերի մեծության հաշվարկման մեթոդաբանությունը: Ծախսերի հաշվապահական ձևակերպման կարգը: Անալիտիկ և սինթետիկ հաշվառման կազմակերպումը: Միավորի ինքնարժեքի ծախսային հոդվածները: Ինքնարժեքի հաշվարկը: Շահույթի նորմայի հասկացությունը և կիրառումը: Արտադրանքի գնի մեծության հաշվարկը: Անհատական գնից շուկայական գնին անցման գործընթացը: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե հաշվարկները կատարվում է ճիշտ: |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, գործնական հանձնարարությունների փաթեթներ, հաշվարկների կատարման ընթացքում օգտագործվող օրինակելի ձևաթղթեր: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ |
| Ուսումնառության արդյունք 6 | Մշակել բիզնես պլան և գործողությունների ծրագիր |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) բիզնես գործունեության համար բիզնես պլանի անհրաժեշտությունը հիմնավորում է, 2) բիզնես պլանի բաժինների բովանդակության մեկնաբանությունները ճիշտ է, 3) բիզնես պլանի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալների կազմը և ձեռք բերման աղբյուրները ճիշտ է ներկայացնում, 4) ճիշտ է կատարում SWOT վերլուծություն, 5) SWOT վերլուծության արդյունքները կիրառում է բիզնես պլանը մշակելու գործընթացում, 6) բիզնես պլանով նախատեսվող միջոցառումները հիմնավորված է, 7) բիզնես պլանի կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը, ժամանակացույցը հիմնավոր է, 8) բիզնես պլանի կատարումն ապահովող ռեսուրսների մեծությունները ճիշտ է սահմանվել, 9) բիզնես պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ռիսկերը և դրանց հաղթահարման քայլերը հիմնավոր են: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է կազմված բիզնես պլանի հիման վրա, որում պետք է արտացոլված լինեն նախատեսված բիզնես գործունեության վերաբերյալ բոլոր հայտնի տեղեկությունները: |

| | |
|---|--|
| | <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Բիզնես պլանի բովանդակությունը և բաժիններում ներառվող հարցերը: Բիզնես պլանի կազմման համար անհրաժեշտ ելակետային տվյալները, դրանց աղբյուրները: SWOT վերլուծության արդյունքների կիրառումը պլանը կազմելու ժամանակ: Բիզնես պլանի կատարման գործողությունների ծրագիրը, դրա կազմման մոտեցումները: Գործողությունների ժամանակացույցը: Պլանի կատարման հնարավոր ռիսկերը, դրանց հաղթահարման միջոցառումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պլանը կազմված է ճիշտ և հիմնավորված:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բիզնես պլանի բովանդակությանը համապատասխան ձևաթղթեր, մեթոդական հանձնարարականներ, պլանը կազմելու համար օգտագործվող ելակետային տվյալներ:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p> | <p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p> |
| <p>Ուսումնառության արդյունք 7</p> | <p>Հաշվել հարկեր, տուրքեր, կազմել ֆինանսական հաշվետվություններ</p> |
| <p>Կատարման չափանիշներ</p> | <ol style="list-style-type: none"> 1) հարկային օրենսդրության հիմնական դրույթները ճիշտ է մեկնաբանում, 2) հարկային օրենսդրության հիմնական հասկացությունները ճիշտ է բացատրում, 3) հարկերի և տուրքերի մեծությունը հաշվելու համար կիրառվող ելակետային ցուցանիշների հաշվարկը ճիշտ է կատարում, 4) հարկերի և տուրքերի մեծությունը ճիշտ է հաշվարկում, 5) հարկերի վճարման ժամկետների գնահատումը համապատասխանում է օրենսդրության պահանջներին, 6) ֆինանսական հաշվետվությունների կազմը ճիշտ է ներկայացնում, 7) անհրաժեշտ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ է լրացնում, 8) ստուգումների իրականացման իրավական ակտերի պահանջները ճիշտ է բացատրում, 9) ստուգումների հետ կապված տնտեսվարողի իրավունքներն ու պարտականությունները ճիշտ է ներկայացնում: |
| <p>Գնահատման միջոցը</p> | <p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առջադրանքների կատարման հիման վրա:</p> |

| | |
|---|--|
| | <p>Ուսանողներին հանձնարարվելու է հաշվել հարկերի և տուրքերի գումարները, լրացնել ֆինանսական հաշվետվություններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի և տուրքերի տեսակները, դրանց տնտեսական նշանակությունը: Հարկային օրենսդրության հիմնական դրույթները: Հարկերի հաշվարկման կարգը և դրույքաչափերը: Հարկատուների պատասխանատվությունը հարկային օրենսդրության պահանջների պահպանման համար: Ֆինանսական հաշվետվությունների տեսակները, հաշվետվությունների լրացման և ներկայացման կարգը: Ստուգումների անցկացումը, կարգը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները ճիշտ է կատարում:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, հարկերի վերաբերյալ օրենքներ և նորմատիվ փաստաթղթեր, մեթոդական նյութեր, հաշվետվությունների ձևաթղթեր, հաշվարկները կատարելու համար օգտագործվող ելակետային նյութերի փաթեթներ:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p> | <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p> |

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՆԵԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ, ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ»

| | |
|-------------------------------------|---|
| Մոդուլի դասիչը | ԱՍՂ-ԺՆԳ-4-20-001 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ասեղնագործության և ժանեկագործության մեջ կիրառվող նյութերը, գործիքները և օժանդակ պարագաները ճանաչելու և դրանց որակական հատկանիշները գնահատելու կարողություններ: |
| Մոդուլի տևողությունը | 18 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| Ուսումնառության արդյունքները | <p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնի ասեղնագործության և ժանեկագործության համար անհրաժեշտ թելերի որակական հատկանիշները, 2. ներկայացնի ասեղնագործության համար օգտագործվող գործվածքների որակական հատկանիշները, 3. ընտրի կիրառվող գործիքների տեսակները և ներկայացնել դրանց որակական հատկանիշները, 4. ընտրի ասեղնագործության և ժանեկագործության ընթացքում կիրառվող օժանդակ պարագաների տեսակները և ներկայացնել դրանց որակական հատկանիշները, 5. ներկայացնի ձեռագործի համար կիրառվող լրացուցիչ նյութերը և զարդերը: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Ներկայացնել ասեղնագործության և ժանեկագործության համար անհրաժեշտ թելերի որակական հատկանիշները |
| Կատարման չափանիշներ | 1) տարբերակում է բուսական, կենդանական ծագման, արհեստական, սինթետիկ, մետաղական և տարբեր նյութերի համադրությամբ թելերը, |

| | |
|---|---|
| | <p>2) ճիշտ է տարբերակում թելերը ձեռագործի տարբեր տեսակների համար /ձեռագործ ասեղնագործությունների, մեքենայի ասեղնագործության, ժանեկագործության տեսակների և կարի տարբեր տեսակների համար/, 3) ներկայացնում է թելերի որակական հատկանիշները /ամրություն, հաստություն, ձգվելիություն, ոլորքի ուղղություն, ոլորքի խտություն, մանրաթելերի քանակ/, 4) տարբերակում է թելերի գունային երանգները՝ գունային աղյուսակների համարներին համապատասխան, ներկայացնում է թելերի պահման ձևերը աշխատանքի ժամանակ և երկարատև պահելու դեպքում:</p> |
| <p>Գնահատման միջոցը</p> | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի թելերի որակական հատկանիշները, թելերի օգտագործման ու պահպանման կանոնները: Գործնական հանձնարարություններ կատարելով ուսանողը պետք է տարբերակի թելերի տեսակները և գունային երանգները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Բուսական, կենդանական և արհեստական թելերի ծագումը և կիրառման բնավանդները, ✓ Ձեռագործ ասեղնագործության, ժանեկագործության և մեքենայական ասեղնագործության համար անհրաժեշտ թելերի տեսակները, ✓ Տարբեր ձեռագործ աշխատանքների կատարման համար օգտագործվող թելերի որակական հատկանիշները՝ ամրություն, հաստություն, ճնրթվելիություն, ոլորքի ուղղություն, ոլորքի խտություն, մանրաթելերի քանակ, ✓ Թելերի գունային երանգների տարբերակում՝ գունային աղյուսակներին համապատասխան: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր թելերի նմուշներ և գունավոր պաստառներ՝ թելերի նմուշները ցուցադրելու համար:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p> | <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p> |
| <p>Ուսումնառության արդյունք 2</p> | <p>Ներկայացնել ասեղնագործության համար օգտագործվող գործվածքների որակական հատկանիշները</p> |

| | |
|--|---|
| Կատարման չափանիշներ | <p>1) ճիշտ է տարբերակում գործվածքների տեսակները և անվանումները,</p> <p>2) ներկայացնում է գործվածքի որակական հատկանիշները ըստ գույնի կայունության, ամրության, ճմրթվելիության, մտնելիության, ձգվողականության,</p> <p>3) տարբերակում է գործվածքի տեսակները ըստ հյուսվածքի ձևերի և խտության,</p> <p>4) ներկայացնում է գործվածքները պահպանելու ձևերը:</p> |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի ասեղնագործության համար օգտագործվող գործվածքների տեսակները, որակական հատկանիշները և գործվածքների պահպանման կանոնները: Գործնական առաջադրանք կատարելու ժամանակ ուսանողը պետք է տարբերակի գործվածքների տեսակները և անվանումները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Գործվածքների ստացման մանրաթելային եղանակները, ✓ Կենցաղային և տեխնիկական գործվածքները, ✓ Բուսական, կենդանական, արհեստական ծագման գործվածքները, ✓ Ասեղնագործության մեջ հիմնական օգտագործվող գործվածքների տեսակները և պահպանման ձևերը: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր գործվածքների նմուշներ: Ցանկալի է այցելել համապատասխան արտադրամասեր ծանոթանալու կատարվող աշխատանքներին, սկսած թելերի ոլորքից մինչև պատրաստի գործվածքի ստացում:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 3 | <p>Ընտրել կիրառվող գործիքների տեսակները և ներկայացնել դրանց որակական հատկանիշները</p> |
| Կատարման չափանիշներ | <p>1) տարբերակում է և ընտրում ձեռագործի տարբեր տեսակներին համապատասխանող գործիքներ՝ ասեղներ, հելուններ, շյուղեր, մաքրք, մեծ մաքրք, գորբենակ /ճանպարկ/,</p> |

| | |
|---|--|
| | <p>2) ճիշտ է ներկայացնում կիրառվող գործիքների անվանումները ձեռագործի տեսակներին համապատասխան,</p> <p>3) ներկայացնում է գործիքների որակական հատկանիշները,</p> <p>4) պահպանում է գործիքներով աշխատելու ժամանակ անվտանգության կանոնները:</p> |
| <p>Գնահատման միջոցը</p> | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով :Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի գործիքների որակական հատկանիշները և նրանց ճիշտ պահպանման կանոնները: Գործնական հանձնարարություն կատարելով ուսանողը պետք է ընտրի ձեռագործի տվյալ տեսակներին համապատասխանող կիրառվող գործիքների տեսակներ՝ իրենց անվանումներով, պահպանելով գործիքներով աշխատելու ժամանակ անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ասեղնագործության և ժանեկագործության տարբեր տեսակներին համապատասխանող գործիքներ (ասեղներ, հելուններ, շյուղեր, մաքրք, մեծ մաքրք, գոբենակ և այլն), ✓ Գործիքների որակական հատկանիշները, ✓ Անվտանգության կանոնների պահպանումը գործիքներով աշխատելու ժամանակ: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գործիքների տեսակներ, գործիքներին վերաբերող տեղեկատու միջոցներ, տեսանյութեր դիդակտիկ նյութեր:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p> | <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ</p> |
| <p>Ուսումնառության արդյունք 4</p> | <p>Ընտրել ասեղնագործության և ժանեկագործության ընթացքում կիրառվող օժանդակ պարագաների տեսակները և ներկայացնել դրանց որակական հատկանիշները</p> |
| <p>Կատարման չափանիշներ</p> | <p>1) ներկայացնում է օժանդակ պարագաների /քարգահ, կոտիկ/օղակ/, գնդասեղներ, մատնոց, մկրատներ/ անհրաժեշտությունը ձեռագործի տարբեր տեսակների համար,</p> |

| | |
|--|---|
| | <p>2) ընտրում է օժանդակ այլ պարագաներ՝ թղթեր, քանոններ, կարկին, մատիտներ և գրիչների տեսակներ, բացատրում օգտագործելու ձևերը և անհրաժեշտությունը,</p> <p>3) պահպանում է օժանդակ պարագաները կիրառելու ժամանակ անվտանգության կանոնները:</p> |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի օժանդակ պարագաների տեսակները և որակական հատկանիշները : Գործնական առաջադրանք կատարելու ժամանակ ուսանողը պետք է ընտրի օժանդակ պարագաներ՝ ձեռագործ աշխատանքների տարբեր տեսակների համար, պահպանելով օժանդակ պարագաներից օգտվելու անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Օժանդակ պարագաների անհրաժեշտությունը ձեռագործի տարբեր տեսակների համար, ✓ Օժանդակ պարագաների տեսակները (քարգահ կոտիկ (օղակ), գնդասեղ, մատնոց, մկրատ) և դրանց որակական հատկանիշները, ✓ Էսքիզներ կատարելու և էսքիզը գործվածքին արտատպելու օժանդակ պարագաները, ✓ Անվտանգության կանոնների պահպանումը գործիքներով աշխատելու ժամանակ: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական եւ գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ նախատեսված օժանդակ պարագաներ, մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութեր:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 1 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 5 | <p>Ներկայացնել ձեռագործի համար կիրառվող լրացուցիչ նյութերը և զարդերը</p> |
| Կատարման չափանիշներ | <p>1) ներկայացնում է ձեռագործի համար կիրառվող լրացուցիչ նյութերը /կաշի, պլաստիկ, սոսնձվող կտորներ, մոմլաթ/ցելոֆան/, թաղիք/ և դրանց կիրառման նպատակը,</p> <p>2) ներկայացնում է ձեռագործի համար կիրառվող լրացուցիչ զարդերը /ուլունքներ, մանրուլունք, թիթեղ, թրթիռ,</p> |

| | |
|---|---|
| | փայլուն, փնջիկներ, տրեզներ/ և դրանց կիրառման նպատակը: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի լրացուցիչ նյութերի և զարդերի կիրառման նպատակը և որակական հատկանիշները: Գործնական հանձնարարություն կատարելով ուսանողը պետք է ընտրի ձեռագործի համար կիրառվող լրացուցիչ նյութերը և զարդերը: Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝ <ul style="list-style-type: none"> ✓ Ձեռագործի համար կիրառվող լրացուցիչ նյութերը և կիրառման նպատակը, ✓ Ձեռագործի համար կիրառվող լրացուցիչ զարդերը և կիրառման նպատակը, (ուլունքներ, փայլուն փնջիկներ, տրեզներ Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար , եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ: |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան լրացուցիչ զարդեր և նյութեր, մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութեր, դիդակտիկ նյութեր: |
| Ուսուցման ժամաքանակը | երաշխավորված տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 1 ժամ |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳԾԱՆԿԱՐ ԵՎ ԳՈՒՆԱՆԿԱՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ» | |
| Մոդուլի դասիչը | ԱՍՂ-ԺՆԳ-4-20-002 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գծանկարի և գունանկարի տեղադրման, կառուցման, ծավալային լուծումների, շտրիխապատման, լույսի-ստվերի արտացոլման, գունային լուծումների կարողություններ: |
| Մոդուլի տևողությունը | 54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 44 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |

| | |
|-------------------------------------|--|
| Ուսումնառության արդյունքները | <p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնի գծանկար և գունանկար կատարելու համար անհրաժեշտ նյութերը և պարագաները, 2. տեղադրի, կառուցի, շտրիխապատի գծանկարը, 3. նկարի գունանկար: |
| Մոդուլի գնահատման կարգը | <p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p> |
| Ուսումնառության արդյունք 1 | <p>Ներկայացնել գծանկար և գունանկար կատարելու համար անհրաժեշտ նյութերը և պարագաները</p> |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է թղթերի տեսակները նկարչության տարբեր տեխնիկաների համար, 2) ճիշտ է ներկայացնում թղթերի չափսերը /ֆորմատ/, 3) ներկայացնում է մատիտների և վրձինների տեսակները, 4) ներկայացնում է ներկերի տեսակները, 5) ներկայացնում է օժանդակ նյութերի անհրաժեշտությունը, 6) նախապատրաստում է աշխատատեղը, դասավորում գործիքները և պարագաները: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի օժանդակ նյութերի անհրաժեշտությունը, ինչպես նաև օգտագործման և պահպանման կանոնները: Գործնական հանձնարարություն կատարելով ուսանողը պետք է կարողանա ընտրել նկարչության համար անհրաժեշտ թղթի տեսակը, թղթերի չափսերը /ֆորմատ , մատիտները , ներկերը և վրձինները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Գծանկարի և գունանկարի դերն ու նշանակությունը, ✓ Գծանկար և գունանկար կատարելու կարողությունները և հմտությունները, ✓ Թղթերի տեսակները և չափսերը, ✓ Մատիտների, վրձինների, ներկերի տեսակները և օժանդակ նյութերի անհրաժեշտությունը, ✓ Աշխատատեղի նախապատրաստում, գործիքների և պարագաների դասավորում: |

| | |
|--|---|
| | Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ: |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական եւ գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծանկարի եւ գունանկարի համար նախատեսված անհրաժեշտ նյութեր և պարագաներ, օժանդակ նյութեր, տեսանյութեր, դիդակտիկ նյութեր: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ |
| Ուսումնառության արդյունք 2 | Տեղադրել, կառուցել, շտրիխապատել գծանկարը |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է տեղադրում թղթի վրա առաջադրված առարկաները, 2) ճիշտ և համաչափ է կառուցում առաջադրված առարկաները, 3) ճիշտ է ստանում առարկաների ծավալը շտրիխապատման միջոցով, լույսի-ստվերի, տոների և կիսատոների զուգորդությամբ, 4) ճիշտ է կիրառում հեռանկարչության օրենքները՝ պլանների խնդիրները, 5) ճիշտ է ստանում ծավալը՝ լույսի-ստվերի (արտացոլման) միջոցով: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է՝ առաջադրված առարկաների տեղադրումը թղթի վրա, առարկաների համաչափ կառուցում, առարկաների ծավալի ստացում լույսի-ստվերի (արտացոլման) և շտրիխավորման միջոցով, տոների և կիսատոների զուգորդությամբ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> ✓ Տոնային նկարների հիմնական խնդիրները, ✓ Առարկայի տեղադրում թղթի վրա, ✓ Առարկայի համաչափ կառուցում, ✓ Շտրիխավորման միջոցով լույսի-ստվերի տոների և կիսատոների զուգորդությամբ առարկայի ծավալի ստացում, ✓ Հեռանկարչության օրենքների կիրառում: |

| | |
|--|--|
| | Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը գործնական առաջադրանքները կատարում է անսխալ: |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ թղթեր , կոշտ և փափուկ մատիտներ, օժանդակ պարագաներ , մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութեր: Յուրաքանչյուր ուսանողի համար անհրաժեշտ է ապահովել նկարակալ և անհրաժեշտ լուսավորություն: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ |
| Ուսումնառության արդյունք 3 | Նկարել գունանկար |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է գունատեսության հասկացությունը և հիմունքները, 2) ներկայացնում է խրոմատիկ և ախրոմատիկ գույները, գունային սպեկտրը, հիմնական և միջանկյալ գույները, չեզոք, տաք և սառը գույները, 3) ընտրում է թուղթը, վրձինները և համապատասխան ներկերը, 4) նկարում է պատկերներ գունային լուծումների միջոցով: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական պարապմունքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի գունատեսության հիմունքները, գունային սպեկտրը, քրոմատիկ և աքրոմատիկ, հիմնական և միջանկյալ, չեզոք, տաք և սառը գույները,</p> <p>Գործնական հանձնարարության ժամանակ պետք է հիմնական գույների խառնուրդից ստանա երանգներ և կատարի որևէ գունանկար աշխատանք:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Գունատեսության հիմունքները, ✓ Գույնը որպես գեղարվեստական արտահայտչականության միջոց, ✓ Գունային օղակի հիմքը կազմող գույներ, ✓ Խրոմատիկ և ախրոմատիկ գույներ, |

| | |
|---|--|
| | <ul style="list-style-type: none"> ✓ Հիմնական և միջանկյալ՝ չեզոք, տաք և սառը գույներ, ✓ Թուղթ, վրձին և համապատասխան ներկեր, ✓ Պատկերների նկարում գունային լուծումներով: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար , եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական եւ գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծանկարի եւ գունանկարի համար նախատեսված բավարար նյութեր և պարագաներ, կահավորված աշխատատեղ՝ յուրաքանչյուր ուսանողի համար և անհրաժեշտ լուսավորություն: Կարելի է ուսուցման ընթացքում կազմակերպել կատարած աշխատանքների ցուցադրում: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ» | |
| Մոդուլի դասիչը | ԱՍՂ-ԺՆԳ-4-20-003 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գծագրության կարողություններ, մասնագիտական նկարչության հատուկ հմտություններ: |
| Մոդուլի տևողությունը | 30 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 22 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| Ուսումնառության արդյունքները | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնի գծագրության համար անհրաժեշտ գործիքները, պարագաները և դրանք կիրառելու ձևերը, 2. կառուցի գծագրեր, 3. կառուցի պատկերների համաչափություններ, 4. ներկայացնի զարդանախշերի հորինվածքների տեսակները և գծագրել դրանք: |

| | |
|--|--|
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Ներկայացնել գծագրության համար անհրաժեշտ գործիքները, պարագաները և դրանք կիրառելու ձևերը |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է գծագրական թղթերի տեսակները և չափսերը /գծագրական, միլիմետրական/ և դրանց հետ աշխատելու ձևը, 2) ներկայացնում է քանոնների տեսակները /քանոններ, անկյունային քանոններ, կորաքանոն/, 3) ներկայացնում է մատիտների տեսակները, կարկիները, գծագրական տուփը, 4) ներկայացնում է օժանդակ պարագաները /գծագրական տախտակ, ռետին, սրիչ/, 5) ներկայացնում է գործիքների, մատիտների պահման եղանակները: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակուսանողը պետք ներկայացնի անհրաժեշտ օժանդակ պարագաների որակական հատկանիշները, պահպանման կանոնները: Գործնական առաջադրանք կատարելով՝ ուսանողը պետք է հանձնարարված առաջադրանքին համապատասխան ընտրի թուղթ, մատիտ և այլ օժանդակ պարագաներ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Գծագրական թղթերի տեսակները և չափսերը, ✓ Քանոնների տեսակները (անկյունային քանոն, կորաքանոն, փոխադրիչ և այլն), ✓ Կոշտ ու փափուկ մատիտների տեսակներ, ✓ Օժանդակ պարագաներ՝ գծագրական տախտակ և քանոն ռեյսչինա, գծագրական տուփ, ✓ Գործիքների, մատիտների պահպանման եղանակները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական եւ գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծագրության համար նյութեր (թուղթ, քանոն, մատիտ, ռետին), գծագրական գործիքներ, մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութեր, դիդակտիկ նյութեր: |

| | |
|--|--|
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ |
| Ուսումնառության արդյունք 2 | Կառուցել գծագրեր |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է գծերի տեսակները և նշանակությանը, 2) գծագրում է պրոյեկցիոն հարթություններ և առանցքներ, 3) գծագրում է առարկայի երեք տեսքերը, 4) կառուցում է առարկայի եռաչափ պատկերը աքսիոնոմետրիայի սկզբունքներով, 5) կատարում է շրջանագծի բաժանումը հավասար մասերի, 6) ճիշտ է ներկայացնում մասշտաբ հասկացությունը: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական պարապմունքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակուսանողը պետք է բացատրի գծերի տեսակների և մասշտաբի նշանակությունը: Գործնական առաջադրանքի ժամանակ պետք է գծագրի առարկայի եռաչափ պատկերը աքսիոնոմետրիայի սկզբունքով և կատարի շրջանագծի բաժանում հավասար մասերի:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Գծերի տեսակները և նշանակությունը, ✓ Պրոեկցիոն գծագրություն, ✓ Առարկայի եռաչափ պատկերի ստացում աքսիոնոմետրիայի սկզբունքով, Շրջանագծի բաժանում հավասար մասերի, ✓ Մեծացման, փոքրացման և բնական չափերի մասշտաբներ: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծագրության համար նյութեր (թուղթ, քանոն, մատիտ, ռետին), գծագրական գործիքներ, մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութեր, դիդակտիկ նյութեր:</p> |

| | |
|--|--|
| Ուսուցման ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| Ուսումնառության արդյունք 3 | Կառուցել պատկերների համաչափություններ |
| Կատարման չափանիշներ | 1) ներկայացնում է համաչափություն հասկացությունը և համաչափության տեսակները /սիմետրիա և ասիմետրիա, հայելային, առանցքային, հայելաառանցքային/, 2) կառուցում է պատկերների համաչափություններ ըստ տեսակի: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի համաչափություն հասկացությունը և համաչափության տեսակները: Գործնական առաջադրանքների ժամանակ կառուցի պատկերներ համաչափության սկզբունքներով: Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝ <ul style="list-style-type: none"> ✓ Հասկացություն համաչափության մասին, ✓ Սիմետրիկ նախշերի կառուցման սկզբունքը, ✓ Պատկերների կառուցման համաչափությունները, ✓ Համաչափության տեսակները (սիմետրիա և ասիմետրիա, հայելային, առանցքային և հայելաառանցքային): Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ: |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծագրության համար նյութեր (թուղթ, քանոն, մատիտ, ռետին), գծագրական գործիքներ, մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութեր, դիդակտիկ նյութեր: |
| Ուսուցման ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| Ուսումնառության արդյունք 4 | Ներկայացնել զարդանախշերի հորինվածքների տեսակները և գծագրել դրանք |
| Կատարման չափանիշներ | 1) ներկայացնում է զարդանախշերի հորինվածքների տեսակները, |

| | |
|--|---|
| | <p>2) գծագրում է վարդադրվագային զարդանախշեր,</p> <p>3) գծագրում է ժապավենաձև զարդանախշեր,</p> <p>4) գծագրում է ցանցային զարդանախշեր,</p> <p>5) ընտրում է և գծագրում երկրաչափական զարդանախշերի տարրերը,</p> <p>6) ընտրում է և գծագրում բուսական զարդանախշերի տարրերը,</p> <p>7) ընտրում է և գծագրում կենդանական զարդապատկերների տարրերը:</p> |
| <p>Գնահատման միջոցը</p> | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի եւ գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի զարդանախշերի հորինվածքային տեսակները:</p> <p>Գործնական առաջադրանքի ժամանակ գծագրի նմուշներ ժապավենաձև, ցանցային, բուսական, կենդանական և երկրաչափական զարդանախշերով:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են`</p> <ul style="list-style-type: none"> ✓ Զարդանախշերի հորինվածքային տեսակները, ✓ Վարդադրվագային, ժապավենաձև և ցանցային զարդանախշեր, ✓ Երկրաչափական զարդանախշերի տեսակները, ✓ Բուսական զարդանախշերի տեսակները, ✓ Կենդանական զարդապատկերների տեսակները, <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ զարդանախշերով կատարված նմուշներ, համապատասխան մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութեր:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p> | <p>տեսական ուսուցում` 2 ժամ գործնական աշխատանք` 8 ժամ</p> |
| <p>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷՍՔԻԶԻ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ԳՈՒՆԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄ, ԷՍՔԻԶԸ ԳՈՐԾՎԱԾՔԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ</p> | |

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

| | |
|-------------------------------------|---|
| Մոդուլի դասիչը | ԱՍՂ-ԺՆԳ-4-20-004 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել էսքիզի, կոմպոզիցիա կառուցելու, էսքիզի գունային լուծման ու էսքիզը գործվածքին փոխանցելու կարողություններ: |
| Մոդուլի տևողությունը | 54 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 48 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԱՍՂ-ԺՆԳ-4-20-002 «Գծանկար և գունանկար կատարելու կարողություններ» և ԱՍՂ-ԺՆԳ-4-20-001 «Ասեղնագործության և ժանեկագործության նյութերը, գործիքները և օժանդակ պարագաները» մոդուլները: |
| Ուսումնառության արդյունքները | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնի զարդարվեստի, զարդանախշերի և զարդապատկերների տեսակներն ու նշանակությունը, 2. կառուցի և գունավորի կոմպոզիցիա, 3. մշակի էսքիզը ասեղնագործության համար, 4. փոխանցի էսքիզը գործվածքին: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Ներկայացնել զարդարվեստի, զարդանախշերի և զարդապատկերների տեսակներն ու նշանակությունը |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է զարդարվեստի տեսակները, ոճերը, 2) ներկայացնում է զարդարվեստի դերը համաշխարհային մշակույթի զարգացման մեջ, 3) ներկայացնում է հայկական զարդարվեստի առանձնահատկությունները, 4) նկարագրում է հայկական ասեղնագործության հիմնական դպրոցների գեղազարդարանքի առանձնահատկությունները, 5) ներկայացնում է զարդապատկերների, զարդանախշերի տեսակներն ու անվանումները: |

| | |
|---|---|
| <p>Գնահատման միջոցը</p> | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է բացատրի զարդարվեստի տեսակները և ոճերը, զարդարվեստի դերը համաշխարհային մշակույթի զարգացման մեջ, հայկական զարդարվեստի առանձնահատկությունները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են`</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ջարդարվեստի տեսակները և ոճերը համաշխարհային մշակույթի զարգացման մեջ, ✓ Ջարդարվեստի դերը, ✓ Հայկական զարդարվեստի առանձնահատկությունները, ✓ Հայկական ասեղնագործության հիմնական դպրոցները, ✓ Ջարդապատկերների և զարդանախշերի տեսակներն ու անվանումները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ զարդանախշերի տեսակներ, զարդանախշերի վերաբերյալ գրականություն, հայկական ասեղնագործական հիմնական դպրոցների մասին տեղեկատվություն:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p> | <p>տեսական ուսուցում` 4 ժամ</p> |
| <p>Ուսումնառության արդյունք 2</p> | <p>Կառուցել և գունավորել կոմպոզիցիա</p> |
| <p>Կատարման չափանիշներ</p> | <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կոմպոզիցիա կառուցելու սկզբունքները, 2) ներկայացնում է բնանկարի, նատյուրմորտի, դիմանկարի, կենցաղային և պատմական ժանրերի կոմպոզիցիա կառուցելու սկզբունքները, ներկայացնում է հայկական մանրանկարչության կոմպոզիցիա, 3) համադրում և կառուցում է երկրաչափական, բուսական, կենդանական տարրերը կոմպոզիցիայի մեջ, 4) գունավորում է կոմպոզիցիան: |
| <p>Գնահատման միջոցը</p> | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական պարապմունքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակուսանողը պետք է բացատրի կոմպոզիցիա կառուցելու սկզբունքները: Գործնական</p> |

| | |
|---|--|
| | <p>առաջադրանքի ժամանակ պետք է բուսական, կենդանական և երկրաչափական զարդանախշերի համադրությամբ կառուցի կոմպոզիցիաներ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են`</p> <ul style="list-style-type: none"> ✓ Տարբեր ժանրերով կոմպոզիցիայի կառուցում (նատյուրմորտ, բնանկար, կենցաղային և այլն), ✓ Հայկական մանրանկարչության կոմպոզիցիա, ✓ Բուսական, կենդանական և երկրաչափական զարդանախշերի համադրմամբ կոմպոզիցիա, ✓ Կոմպոզիցիայի գունավորում: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար , եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, տեսանյութեր, օժանդակ պարագաներ (թուղթ, մատիտ, ներկեր, վրձիններ), համացանց:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p> | <p>տեսական ուսուցում` 2 ժամ գործնական աշխատանք` 16 ժամ</p> |
| <p>Ուսումնառության արդյունք 3</p> | <p>Մշակել էսքիզը ասեղնագործության համար</p> |
| <p>Կատարման չափանիշներ</p> | <p>1) էսքիզը մշակում է և վերածում ասեղնագործության գծագրի /հարթակարի տեսակների համար/, 2) էսքիզը վերածում է խաչկար ասեղնագործության գծագրի` ըստ վանդակների /միլիմետրանոց թղթի վրա ձեռքով նախշերը ստանալու ձևով կամ հատուկ համակարգչային ծրագրերով/:</p> |
| <p>Գնահատման միջոցը</p> | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքի միջոցով: Գործնական առաջադրանքի ժամանակ ուսանողը պետք է էսքիզ մշակի հարթակարերի տարբեր տեսակների համար: Միլիմետրական թղթի վրա գծի գծագիր խաչկար կարատեսակի համար: Արդյունքի ծրագրային մանրամասներն են`</p> <ul style="list-style-type: none"> ✓ Հարթակարերի տարբեր տեսակների համար էսքիզներ և գծագրեր, ✓ Գծագրեր խաչկարի համար միլիմետրական թղթի վրա, ✓ Նախշեր համակարգչային ծրագրով: |

| | |
|--|--|
| | Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ: |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մշակված տարբեր տեսակի էսքիզների նմուշներ, օժանդակ պարագաներ (միլիմետրական թուղթ, մատիտ, ռետին, քանոնների տեսակներ) և համացանց: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | գործնական աշխատանք՝ 16 ժամ |
| Ուսումնառության արդյունք 4 | Փոխանցել էսքիզը գործվածքին |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ընտրում է էսքիզը գործվածքին փոխանցելու անհրաժեշտ եղանակը համպատասխան կարատեսակի համար, 2) ընտրում է անհրաժեշտ օժանդակ պարագաները էսքիզի փոխանցումը կատարելու համար, 3) կատարում է էսքիզի փոխանցում թափանցիկ թղթին, 4) կատարում է թափանցիկ և պատճենահանման թղթի տեղադրում գործվածքի վրա, 5) կատարում է շուրջակարով կամ գնդասեղներով ամրացումը գործվածքին, 6) կատարում է էսքիզի ճիշտ փոխանցում գործվածքին, 7) կատարում է լույսի ազդեցությամբ էսքիզի փոխանցումը գործվածքին: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքի միջոցով: Գործնական առաջադրանքի ժամանակ ուսանողը պետք է ընտրի օժանդակ պարագաներ և փոխանցի էսքիզը գործվածքին:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Անհրաժեշտ օժանդակ պարագաներ, ✓ էսքիզի փոխանցում թափանցիկ թղթին, ✓ Պատճենահանման և թափանցիկ թղթի տեղադրում գործվածքի վրա, ✓ Գնդասեղներով կամ շուրջակարով ամրացումը գործվածքին, ✓ էսքիզի փոխանցումը գործվածքին, ✓ Լույսի ազդեցությամբ էսքիզի փոխանցումը գործվածքին: |

| | |
|---|---|
| | Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար , եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ: |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ օժանդակ պարագաներ (թափանցիկ և պատճենահանման թուղթ, մատիտ, գնդասեղ, գործվածք, պրոյեկտոր): |
| Ռիսուցման երաշխավորված ժամաքանակը | գործնական աշխատանք՝ 16 ժամ |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ԴԻՉԱՅՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԽՄԲԱԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ» | |
| Մոդուլի դասիչը | ԱՍՂ-ԺՆԳ-4-20-005 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել համակարգչային ծրագրի հիմնական վահանակների վերաբերյալ գիտելիքներ, համակարգչային ծրագրով դիզայն ստեղծելու և խմբագրելու կարողություններ: |
| Մոդուլի տևողությունը | 24 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն: |
| Ռիսումնառության արդյունքները | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1. ներկայացնի համակարգչային ծրագրի կիրառումը մեքենայական ասեղնագործության համար, 2. ստեղծի և խմբագրի ասեղնագործության դիզայնը: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ռիսումնառության արդյունք 1 | Ներկայացնել համակարգչային ծրագրի կիրառումը մեքենայական ասեղնագործության համար |
| Կատարման չափանիշներ | 1) ճիշտ է բացում ծրագիրը, 2) ճիշտ է ներկայացնում հիմնական վահանակները, 3) ճիշտ է մուտքագրում պատրաստի դիզայնը, 4) ճիշտ է ֆորմատավորում և պահպանում դիզայնը, |

| | |
|--|---|
| | <p>5) ճիշտ է ներկայացնում խմբագրման հրամանները,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում կութերի տեսակների վահանակները,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում կութերի հատկությունները:</p> |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համակարգչային ասեղնագործության ծրագրի կիրառումը, խմբագրման հրամանները, կութերի տեսակների վահանակները և կութերի հատկությունները: Գործնական առաջադրանքի ժամանակ կհանձնարարվի միացնել համակարգիչը, բացել ծրագիրը , մուտքագրել պատրաստի դիզայնը՝ պահպանելով համապատասխան ֆորմատը:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ծրագրի բացում, ✓ Պատրաստի դիզայնի մուտքագրում, ✓ Դիզայնի ֆորմատավորում և պահպանում, ✓ Կութերի տեսակների վահանակները և կութերի հատկությունները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ՝ համակարգիչ, համապատասխան ծրագրեր, մասնագիտական գրականություն:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 2 | <p>Ստեղծել և խմբագրել ասեղնագործության դիզայնը</p> |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է պտտում և տեղափոխում պատրաստի դիզայնը, 2) ստուգում է դիզայնի կութերի հատկությունները և գույների քանակը, 3) փոխում է պատրաստի դիզայնի գույները և գույների հերթականությունը, 4) ճիշտ է մուտքագրում տարրական գրաֆիկական նկարը, |

| | |
|--|--|
| | <p>5) ճիշտ է ընտրում կութերի տեսակներն ըստ համապատասխան նկարի,</p> <p>6) ճիշտ է ստեղծում և պահպանում դիզայնը:</p> |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է տեսական եւ գործնական հանձնարարության հիման վրա: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի կութերի հատկությունները և գույների քանակը: Գործնական հանձնարարության ժամանակ ուսանողին կտրվի պատրաստի դիզայն, կհանձնարարվի պտտել և տեղափոխել այն , ստուգել կութերի և գույների քանակը, մուտքագրել նկարը և նկարին համապատասխան ընտրել կութերը և պահպանել դիզայնը:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են`</p> <ul style="list-style-type: none"> ✓ Պատրաստի դիզայնի պտտում եվ տեղափոխում, ✓ Դիզայնի կութերի հատկությունները և գույների քանակը, ✓ Նկարի մուտքագրում, ✓ Նկարին համապատասխան կութերի ընտրություն և դիզայնի պահպանում, <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>տեսական ուսուցում` 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք` 12 ժամ</p> |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» | |
| Մոդուլի դասիչը | ԱՄՂ-ԺՆԳ-4-20-006 |
| Մոդուլի նպատակը | <p>Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել համակարգչային մեքենասարքավորումների տեխնիկական բնութագրման և շահագործման հմտություններ, ծանոթացնել օգտագործվող նյութերի տեսակներին ու ասեղնագործության տեխնոլոգիային:</p> |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ որից` |

| | |
|-------------------------------------|--|
| | տեսական ուսուցում՝ 16 ժամ գործնական աշխատանք՝ 56 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԱՄՂ-ԺՆԳ-4-20-005 «Համակարգչային ծրագրով դիզայն ստեղծելու և խմբագրելու կարողություններ» մոդուլը: |
| Ուսումնառության արդյունքները | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնի համակարգչային մեքենասարքավորումների տեխնիկական բնութագիրը և շահագործումը, 2. ներկայացնի և ընտրել թելերի և կայունացուցիչների տեսակները, 3. կատարի համակարգչային ծրագրով մեքենայական ասեղնագործություն: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Ներկայացնել համակարգչային մեքենասարքավորումների տեխնիկական բնութագիրը և շահագործումը |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում համակարգչային մեքենասարքավորումների տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում մեքենասարքավորումների տեխնիկական բնութագիրը, 3) միացնում է մեքենան, ճիշտ է լիցքավորում և տեղադրում մաքրքը, 4) ճիշտ է կարգավորում մեքենասարքավորման ռեժիմները, 5) ճիշտ է թելում մեքենան, 6) ճիշտ է մուտքագրում դիզայնը, 7) ճիշտ է տեղադրում գործվածքը և անհրաժեշտ նյութերը, ամրացնում օղակի մեջ, տեղադրում մեքենայի սարքին, 8) պահպանում է անվտանգության կանոնները: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ հանձնարարվելու է ուսանողին ներկայացնել համակարգչային մեքենասարքավորումների տեսակները և տեխնիկական բնութագիրը: Գործնական աշխատանքի ժամանակ կհանձնարարվի միացնել մեքենան , թելել մեքենան, լիցքավորել և տեղադրել մաքրքը, կարգավորել ռեժիմը, մուտքագրել դիզայնը, տեղադրել գործվածքը, նկարը, վահանակները և թելերը օղակի մեջ, տեղադրել մեքենայի սարքին՝ պահպանելով անվտանգության |

| | |
|---|--|
| | <p>կանոնները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համակարգչային մեքենասարքավորումների տեսակները, ✓ Մեքենասարքավորումների տեխնիկական բնութագիրը, ✓ Մեքենայի թելում, մաքրքի լիցքավորում և տեղադրում, ✓ Մեքենասարքավորումների ռեժիմների կարգավորում և դիզայնի մուտքագրում, ✓ Գործվածքի և անհրաժեշտ նյութերի (նկար, վահանակ, թել) ամրացումը օղակի մեջ և տեղադրումը մեքենայի սարքին՝ պահպանելով անվտանգության կանոնները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համակարգիչ, համակարգչային ասեղնագործության նմուշներ, համապատասխան ծրագիր և գրականություն:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p> | <p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p> |
| <p>Ուսումնառության արդյունք 2</p> | <p>Ներկայացնել և ընտրել թելերի և կայունացուցիչների տեսակները</p> |
| <p>Կատարման չափանիշներ</p> | <ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում և ներկայացնում թելերի տեսակները, 2) ճիշտ է ընտրում և ներկայացնում կայունացուցիչների տեսակները և հատկությունները, 3) ճիշտ է ընտրում և ներկայացնում կայունացուցիչները գործվածքին և օղակին ամրացնելու տարբերակները: |
| <p>Գնահատման միջոցը</p> | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարության հիման վրա: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողին հանձնարարվելու է ներկայացնել թելերի և կայունացուցիչների տեսակները և հատկությունները, իսկ գործնականի ժամանակ կհանձնարարվի կատարել կայունացուցիչները գործվածքին և օղակին ամրացնելու տարբերակները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Թելերի տեսակները, |

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> ✓ Կայունացուցիչների տեսակները և հատկությունները, ✓ Կայունացուցիչները գործվածքին և օղակին ամրացնելու տարբերակները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ թելեր, գործվածքներ և կայունացուցիչների տեսակներ: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ |
| Ուսումնառության արդյունք 3 | Կատարել համակարգչային ծրագրով մեքենայական ասեղնագործություն |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում տրիկոտաժե գործվածքի համար համապատասխան թելերը, կայունացուցիչները, ասեղները, 2) ճիշտ է կատարում տրիկոտաժե գործվածքի վրա ասեղնագործությունը, 3) ճիշտ է ընտրում բարակ, թափանցիկ, նուրբ գործվածքների համար համապատասխան թելերը, կայունացուցիչները, ասեղները, 4) ճիշտ է կատարում բարակ, թափանցիկ, նուրբ գործվածքների վրա ասեղնագործությունը, 5) ճիշտ է ընտրում բնական և արհեստական կաշիների համար համապատասխան թելերը, կայունացուցիչները, ասեղները, 6) ճիշտ է կատարում բնական և արհեստական կաշիների վրա ասեղնագործությունը, 7) ճիշտ է ընտրում խավավոր գործվածքների համար համապատասխան թելերը, կայունացուցիչները, ասեղները, 8) ճիշտ է կատարում խավավոր գործվածքների վրա ասեղնագործությունը, 9) ճիշտ է կատարում ասեղնագործության տարբեր տեսակները՝ կտրտովի, ապլիկացիա, ժանյակ և այլն: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է ներկայացնել համակարգչային ասեղնագործության տեխնոլոգիան, թելերը, կայունացուցիչները և ասեղները: Գործնական աշխատանքի ժամանակ կառաջադրվի կատարել ասեղնագործություն տրիկոտաժի, թափանցիկ նուրբ գործվածքի, բնական և արհեստական կաշիների խավավոր գործվածքների վրա, |

| | |
|--|--|
| | <p>կատարի նաև կտրտովի հարթակար, ապլիկացիա, ժանյակ և այլն:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Տրիկոտաժե գործվածքի համար համապատասխան թելեր, կայունացուցիչներ, ասեղներ, ✓ Տրիկոտաժե գործվածքի վրա ասեղնագործություն, ✓ Նուրբ գործվածքներին համապատասխան թելեր, կայունացուցիչներ, ասեղներ, ✓ Նուրբ գործվածքների վրա ասեղնագործություն, ✓ Բնական և արհեստական կաշիներին համապատասխան թելեր, կայունացուցիչներ, ասեղներ, ✓ Ասեղնագործություն բնական և արհեստական կաշիների վրա, ✓ Խավավոր գործվածքների համար համապատասխան թելեր, կայունացուցիչներ, ասեղներ, ✓ Ասեղնագործություն խավավոր գործվածքների վրա, ✓ Ասեղնագործություն տարբեր տեսակներով՝ կտրտովի, ապլիկացիա, ժանյակ և այլն: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գործվածքների , արհեստական և բնական կաշիների նմուշներ , ասեղներ, կայունացուցիչներ և համապատասխան գրականություն:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p> | <p>տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 42 ժամ</p> |
| <p>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԵՌԱԳՈՐԾ ԱԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՐԶ ԵՎ ԲԱՐԴ ԿԱՐԱՏԵՍԱԿՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</p> | |
| <p>Մոդուլի դասիչը</p> | <p>ԱՍՂ-ԺՆԳ-4-20-007</p> |
| <p>Մոդուլի նպատակը</p> | <p>Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ասեղնագործության մեջ կիրառվող պարզ և բարդ կարատեսակներ կատարելու կարողություններ և հմտություններ:</p> |
| <p>Մոդուլի տևողությունը</p> | <p>60 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ</p> |

| | |
|-------------------------------------|---|
| | գործնական աշխատանք՝ 48 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԱՍՂ-ԺՆԳ-4-20-001 «Ասեղնագործության և ժանեկագործության նյութերը, գործիքները և օժանդակ պարագաները» մոդուլը և ԱՍՂ-ԺՆԳ-4-20-004 «Էսքիզի կոմպոզիցիայի կառուցում և գունային լուծում, էսքիզը գործվածքին փոոխանցելու կարողություններ» մոդուլը: |
| Ուսումնառության արդյունքները | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1. կատարի ձեռքի ասեղնագործության պարզ կարատեսակներ, 2. կատարի ձեռքի ասեղնագործության բարդ կարատեսակներ՝ ընտրելով նվազագույնը 2 տեսակ, 3. ներկայացնի պարզ և բարդ կարատեսակների կիրառման բնագավառները: Կատարի ասեղնագործություն ընտրած բնագավառում: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Կատարել ձեռքի ասեղնագործության պարզ կարատեսակներ |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում պարզ կարատեսակների անվանումները, տարբերակում է մեկը մյուսից, բնութագրում է առանձնահատկությունները (շուկալ, ցողունակար, շղթայակար, օղակար, պատկար, խաչմերուկ կար, պարզ խաչկար, դարձկար /ետկար/, մեքենակար, պարզ հարթակար, սարդակար, փաթաթովի հանգուցավոր կարեր, ուլունքով ասեղնագործություն, եղևնակար, բրինձ, վերադիր կարեր, միացնող կարեր, պարզ թելքաշ), նվազագույնը 10 անվանում, 2) ընտրում է գործվածքը, թելը, գործիքները, օժանդակ պարագաները տվյալ կարատեսակը կատարելու համար, 3) ճիշտ է կատարում պարզ կարատեսակները՝ պահպանելով համաչափությունը, նվազագույնը 10 տեսակ, 4) ճիշտ է ամրացնում թելը կտորին ասեղնագործության սկզբում և աշխատանքը ավարտելուց հետո: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի պարզ կարատեսակների անվանումները, տարբերակի կարատեսակները մեկը մյուսից, բնութագրի նրանց առանձնահատկությունները: Գործնական հանձնարարություններ կատարելով ուսանողը պետք է ընտրի՝ գործվածքը, թելը, գործիքները, մկրատը և ասեղը տվյալ կարատեսակը |

| | |
|---|--|
| | <p>կատարելու համար:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Պարզ կարատեսակների տարբերակում և բնութագրում (ցողնակար, շղթայակար, օղակար, խաչմերուկ, խաչկար, սարդակար, փաթաթովի և հանգուցավոր կարեր, շուլալ, պարզ թելքաշեր, նվազագույնը 10 կարատեսակ), ✓ Կարատեսակը կատարելու համար անհրաժեշտ պարագանները (գործվածք, թել, մկրատ, ասեղ), ✓ Ասեղնագործության սկզբում և ավարտից հետո ամրակարի կատարում: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ կարատեսակների համար նախատեսված գործվածքներ ,թելեր , մկրատ, ասեղ , պատրաստի կարատեսակների նմուշներ , մասնագիտական գրականություն:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p> | <p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ</p> |
| <p>Ուսումնառության արդյունք 2</p> | <p>Կատարել ձեռքի ասեղնագործության բարդ կարատեսակներ՝ ընտրելով նվազագույնը 2 տեսակ</p> |
| <p>Կատարման չափանիշներ</p> | <ol style="list-style-type: none"> 1) տարբերակում է բարդ կարատեսակներով արված ասեղնագործությունները, ներկայացնում է անվանումները, բնութագրում է յուրաքանչյուրի առանձնահատկությունները (Այնթապի թելքաշ, Որֆայի հարթակար, Մարաշի հյուսված կար, Մարաշի հարթակար, Սվազի համրովի ասեղնագործություն, գեղարվեստական հարթակար, հարթակարի այլ տեսակներ, ոսկեթել ասեղնագործության տեսակներ, համրովի ասեղնագործության կարատեսակներ, Վանի կար, շարակար, վերադիր ասեղնագործության տեսակներ, կտրտովի ասեղնագործության տեսակներ), 2) ընտրում է 2 բարդ կարատեսակ և ասեղնագործում նախշերը, 3) ընտրում է գործվածքը, թելերը, գործիքները, օժանդակ պարագանները տվյալ բարդ կարատեսակը կատարելու համար, նախապատրաստում է աշխատատեղը, |

| | |
|--|--|
| | <p>4) գծագիրը կամ էսքիզը փոխանցում է կտորին, իսկ համրովի ասեղնագործությունների դեպքում կատարում հատահաշիվ,</p> <p>5) ընտրած բարդ կարատեսակի ասեղնագործությունը կատարում է անթերի,</p> <p>6) կատարում է աշխատանքի վերջնամշակումը:</p> |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի բարդ կարատեսակներով արված ասեղնագործությունները, անվանումները, բնութագրի յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Գործնական հանձնարարություններ կատարելով ուսանողը պետք է ընտրի՝ գործվածքը, թելը, գործիքները, մկրատը և ասեղը, տվյալ կարատեսակը կատարելու համար:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Բարդ կարատեսակների տարբերակում և բնութագրում (այնթապի թելքաշ, մարաշի հյուսված կար, գեղարվեստական հարթակար, հմրովի և կտրտովի հարթակարեր), ✓ Կարատեսակը կատարելու համար անհրաժեշտ պարագաններ (գործվածք, թել, մկրատ, ասեղ), ✓ Էսքիզի կամ գծագրի փոխանցում կտորին, համրովի ասեղնագործության դեպքում՝ հատահաշվի կատարում, ✓ Ասեղնագործության կատարում և վերջնամշակում: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր կարատեսակների համար նախատեսված գործվածքներ, թելեր, մկրատ, ասեղ, պատրաստի կարատեսակների նմուշներ, մասնագիտական գրականություն:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 3 | <p>Ներկայացնել պարզ և բարդ կարատեսակների կիրառման բնագավառները: Կատարել ասեղնագործություն ընտրած</p> |

| | բնագավառում |
|--|---|
| Կատարման չափանիշներ | <p>1) ներկայացնում է ասեղնագործության կիրառման բնագավառները,</p> <p>2) ասեղնագործում է հագուստի վրա զարդանախշեր և պատկերներ, կատարում է աշխատանքի բոլոր փուլերը՝ ընտրելով կարատեսակներ, թելեր, գույներ, ճիշտ տեղադրելով զարդանախշերը,</p> <p>3) ասեղնագործում է կենցաղային տարբեր իրերի վրա /սփռոց, թաշկինակ, ծածկոց, տակդիր, վարագույր, անկողնային պարագաներ, պայուսակներ, գրպանիկներ, հուշանվերներ, դեկորատիվ տարբեր իրեր/,</p> <p>4) կատարում է պարզ և բարդ կարատեսակներով գեղարվեստական աշխատանքներ, արդյունքում ստանալով ասեղնագործ նկար, գորգ, կամ պատի զարդ /պանո/,</p> <p>5) կատարում է ասեղնագործ աշխատանքի վերջնամշակումը:</p> |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի ասեղնագործության կիրառման բնագավառները:</p> <p>Գործնական հանձնարարություններ կատարելով՝ ուսանողը պետք է կատարի ասեղնագործություն՝ պարզ և բարդ կարատեսակներով, հագուստի, վարագույրների, ծածկոցների, անկողնային պարագաների, հուշանվերների վրա:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ասեղնագործության կիրառման բնագավառները, ✓ Հագուստի համար զարդանախշեր և պատկերներ, ✓ Ընտրված կարատեսակներ, թելեր, գույներ, ✓ Ասեղնագործում՝ վարագույրներ, ծածկոցներ, անկողնային պարագաներ , հուշանվերներ, ✓ Պարզ եւ բարդ կարատեսակներով գեղարվեստական աշխատանքներ, ✓ Ասեղնագործ նկար կամ պատի զարդ (պանո): <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գործիքներ, թելեր, գործվածքներ, պատրաստի աստղնագործ սփրոց, վարագույրների ծածկոցների եւ</p> |

| | |
|--|---|
| | գեղարվեստական այլ աշխատանքների նմուշներ, մասնագիտական գրականություն և համացանց: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ» | |
| Մոդուլի դասիչը | ԱՍԴ-ԺՆԳ-4-20-008 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ուսանողին ծանոթացնել ասեղնագործության պատմամշակութային ակունքներին և արդի ասեղնագործության զարգացման պատմությանը, ձևավորել ասեղնագործության տեսակները կատարելու կարողություններ: |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 16 ժամ գործնական աշխատանք՝ 56 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԱՍԴ-ԺՆԳ-4-20-007 «Ձեռագործ ասեղնագործության պարզ և բարդ կարատեսակներ կատարելու կարողություններ» մոդուլը: |
| Ուսումնառության արդյունքները | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնի ասեղնագործության պատմամշակութային ակունքները և արդի ասեղնագործության զարգացման ուղղությունները, 2. կատարիլ լիցք (հարթակար), 3. կատարի վերադիր ասեղնագործություն /ապլիկացիա/, 4. կատարի համրովի ասեղնագործություն, 5. կատարի կտրտովի ասեղնագործություն, 6. կատարի պարզ և բարդ թելքաշներ, Այնթապի թելքաշ, 7. կատարի Մարաշի հյուսված կարով ասեղնագործություն: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |

| | |
|--|--|
| Ուսումնառության արդյունք 1 | Ներկայացնել ասեղնագործության պատմամշակութային ակունքները և արդի ասեղնագործության զարգացման ուղղությունները |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ասեղնագործությունը որպես կիրառական և ժողովրդական արվեստի ճյուղ, 2) ներկայացնում է հայկական ասեղնագործության պատմությունը, հայկական ասեղնագործության հիմնական դպրոցների առանձնահատկությունները, 3) ներկայացնում է ասեղնագործության արդի զարգացման ուղղությունները և կիրառման ոլորտները: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի ասեղնագործությունը որպես կիրառական և ժողովրդական արվեստի ճյուղ , հայկական ասեղնագործության պատմությունը, հիմնական դպրոցների առանձնահատկությունները, արդի զարգացման ուղղությունները և կիրառման ոլորտները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են`</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ասեղնագործությունը որպես կիրառական և ժողովրդականական արվեստի ճյուղ, ✓ Հայկական ասեղնագործության պատմությունը, ✓ Հայկական ասեղնագործության հիմնական դպրոցների առանձնահատկությունները, ✓ Ասեղնագործության արդի զարգացման ուղղությունները և կիրառման ոլորտները, <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պատմությունը ներկայացնող անհրաժեշտ մասնագիտական գրականություն, համակարգիչ: |
| Ուսուցման Երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում` 4 ժամ |
| Ուսումնառության արդյունք 2 | Կատարել լիցք (հարթակար) |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ընտրում է նախընտրած լիցքի (հարթակարի) առնվազն 2 տեսակ /ուռուցիկ հարթակար, ոսկեթել-մետաքսաթել հարթակար, համրովի հարթակար, Մարաշի հարթակար /կոթ-ասեղ/, արագ հարթակար/, 2) մշակում է էսքիզը զարդանախշերի և պատկերների գունային լուծումերին համապատասխան, |

| | |
|---|---|
| | <p>3) ընտրում է լիցքի(հարթակարի) տեսակին համապատասխանող գործվածք և թելեր,</p> <p>4) էսքիզը փոխանցում է գործվածքին,</p> <p>5) ասեղնագործում է լիցք (հարթակար)՝ ըստ տեսակների, պահելով կատարման փուլերի հերթականությունը,</p> <p>6) ասեղնագործում է կոկիկ և համաչափ,</p> <p>7) կատարում է վերջնամշակման աշխատանքները:</p> |
| <p>Գնահատման միջոցը</p> | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների միջոցով: Գործնական առաջադրանքի ժամանակ ուսանողը պետք է մշակի էսքիզ գեղարվեստական հարթակարին համապատասխան զարդանախշերով և գունային լուծումներով: Էսքիզը պետք է փոխանցի գործվածքին ընտրելով համապատասխան թելեր և ասեղներ:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Լիցքի (հարթակար) ասեղնագործում՝ ըստ տեսակների, կատարման փուլերի հերթականությամբ, (ուռուցիկ հարթակար, ոսկեթել-մետաքսաթել հարթակար, համրովի հարթակար, Մարաշի հարթակար /կոթ-ասեղ/, արագ հարթակար), ✓ Էսքիզի մշակում զարդանախշերով և գունային լուծումներով, ✓ Էսքիզի փոխանցում գործվածքին, ✓ Հարթակարի տեսակին համապատասխան գործվածքներ և թելեր, ✓ Հարթակարի կատարում, վերջնամշակման աշխատանքներ: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գեղարվեստական հարթակարով կատարված նմուշներ, թելեր, գործվածքներ, օժանդակ պարագաներ, գունավոր պաստառներ և մասնագիտական գրականություն:</p> |
| <p>Ուսուցման ժամաքանակը</p> | <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ</p> |

| | |
|-----------------------------------|--|
| Ուսումնառության արդյունք 3 | Կատարել վերադիր ասեղնագործություն /ապլիկացիա/ |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է վերադիր ասեղնագործության տեսակները և առանձնահատկությունները /պարզ վերադիր ասեղնագործություն /ապլիկացիա/, Քիլիսի կտրտովի վերադիր ասեղնագործություն, տարբեր նյութերով վերադիր ասեղնագործությունը /կաշի, քուղ, տրեզ, թաղիք/, 2) ընտրում է վերադիր ասեղնագործության տեսակը, 3) մշակում է էսքիզը զարդանախշերի և պատկերների գունային լուծումերին համապատասխան, 4) ընտրում է ասեղնագործության նյութեր, օժանդակ պարագաներ, 5) ընտրում և կառուցում է տափի վրա զարդանախշի էսքիզը, 6) տեղադրում է կտրտած կտորները տափի վրա, ամրացնում գնդասեղները, շուլալում կտորները, 7) ընտրում է էսքիզին համապատասխան կարատեսակները՝ կտորները տափի վրա ամրացնելու համար, 8) ասեղնագործում է կոկիկ և համչափ, 9) կատարում է վերջնամշակման աշխատանքները: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ հանձնարարվելու է ուսանողին ներկայացնել վերադիր ասեղնագործության տեսակները և առանձնահատկությունները: Գործնական արաջադրանքի ժամանակ կհանձնարարվի կատարել վերադիր ասեղնագործություն տարբեր նյութերով (գործվածք, կաշի, տրեզ, տաղիկ) :</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Վերադիր ասեղնագործության տեսակները և առանձնահատկությունները, ✓ Տարբեր նյութերով վերադիր ասեղնագործություն (գործվածք, կաշի , տրեզ, տաղիկ,) ✓ Գունային լուծումներով զարդանախշեր և պատկերներ, ✓ Ասեղնագործությանը համապատասխան նյութեր և օժանդակ պարագաներ, ✓ Զարդանախշի կառուցում տափի վրա, կտրտած կտորների ամրացում գնդասեղներով կամ շուլալով, ✓ Կտորները տափի վրա ամրացնելու համար համապատասխան կարատեսակներ, ✓ Ասեղնագործում և վերջնամշակում: |

| | |
|--|--|
| | Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ: |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ վերադիր ասեղնագործության համար անհրաժեշտ նմուշներ, գործվածքներ, թելեր, տափ, այլ օժանդակ պարագաներ, ձեւավորած պաստառներ և մասնագիտական գրականություն: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ |
| Ուսումնառության արդյունք 4 | Կատարել համրովի ասեղնագործություն |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) տարբերակում է համրովի կարատեսակները /խաչկարի տեսակներ, գրեթեկային կարեր, համրովի հարթակար, թեք հարթակար, մաղակար, շարակար, Վանի կար, Սվազի կար/, 2) ընտրում է համրովի կարատեսակի 1 ձև, 3) կատարում է նախնական էսքիզի մշակում համրովի աշխատանքի համար, 4) օգտվում է պայմանական նշաններից, գծագրերից, քարտեզներից, 5) կատարում է հատահաշիվ տվյալ կարատեսակի համար, 6) ընտրում է կտորը և թելերը, 7) ճիշտ է համրում հատերը, կտորի թելերը, վանդակները, 8) ասեղնագործում է կոկիկ և համաչափ, 9) կատարում է վերջնամշակման աշխատանքները: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի գնահատումը կատարվում է տեսական և գործնական հանձնարարության հիման վրա: Հարց ու պատասխանի ժամանակահանձնարարվելու է ներկայացնել համրովի ասեղնագործության տեսակները (համրովի և թեք հարթակար, մաղակար, շարակար, Վանի և Սվազի կար) և առանձնահատկությունները: Գործնական աշխատանքի ժամանակ կհանձնարարվի կատարել էսքիզի մշակում համրովի աշխատանքի համար և կարատեսակի կատարում: Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝ |

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> ✓ Համրովի հարթակարերի տեսակները (համրովի և թեք հարթակար, մաղակար, շարակար, Վանի եւ Սվազի կար եւ խաչկար), ✓ Համրովի աշխատանքի համար էսքիզի մշակում, գործվածքի հենքին համապատասխան հատահաշվի կատարում, ✓ Ասեղնագործում և վերջնամշակում: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ՝ համրովի հարթակարի տեսակով կատարված նմուշներ, գործվածքներ, թելեր, տափ, այլ օժանդակ պարագաներ, ձեւավորած պաստառներ, մասնագիտական գրականություն և համացանց:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 5 | <p>Կատարել կտրտովի ասեղնագործություն</p> |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) կառուցում կամ ընտրում է էսքիզ և գծագիր կտրտովի ասեղնագործության համար, 2) ընտրում է կտորը, թելերը, կարատեսակը, օժանդակ պարագաները, 3) գծագիրը փոխանցում է կտորին, 4) ճիշտ է կատարում զարդանախշի միացման եղանակները, 5) ճիշտ է կտրտում ավելորդ հատվածները, 6) կատարում է վերջնամշակման աշխատանքները: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների միջոցով: Հանձնարարվելու է կատարել էսքիզ կտրտովի ասեղնագործության համար, էսքիզը փոխանցել գործվածքին և կատարել զարդանախշի միացման աշխատանքները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ էսքիզ կտրտովի ասեղնագործության համար: |

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> ✓ Օժանդակ պարագաներ՝ գնդասեղ, գործվածք, ասեղ, թելեր, մկրատ, տպիչ, ✓ Էսքիզի փոխանցում կտորին, ✓ Զարդանախշերի միացման եղանակները, ✓ Ավելորդ հատվածների կտրտում և վերջնամշակում: <p>Արդյունքը գնահատվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ կտրտովի հարթակարի տեսակով կատարված նմուշներ, գործվածքներ, թելեր, տափ, այլ օժանդակ պարագաներ, ձեւավորած պաստառներ, մասնագիտական գրականություն և համացանց:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 6 | <p>Կատարել պարզ և բարդ թելքաշներ, Այնթապի թելքաշ</p> |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է թելքաշ ասեղնագործության ձևերը, Այնթապի ասեղնագործության զարդանախշերը, 2) կազմում է նախնական էսքիզ և նախշերի կոմպոզիցիա, 3) ընտրում է գործվածքը, թելերը, գործիքը, օժանդակ պարագաները, 4) ճիշտ է կատարում հատահաշիվը տվյալ նախշի կամ գծագրի համար, 5) ճիշտ է կատարում թելերի հաշվարկը և կտորի թելերի կտրել-դուրս քաշելը, 6) անթերի է կատարում պարզ թելքաշի նախշերը, 7) անթերի է կատարում բարդ թելքաշի նախշերը, <p>կատարում է վերջնամշակման աշխատանքները:</p> |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակպետք է ներկայացնի թելքաշ ասեղնագործության տեսակները և առանձնահատկությունները: Գործնական աշխատանքի ժամանակ պետք է կատարի նախնական էսքիզ կարատեսակին համապատասխան, կատարի թելերի հաշվարկ և թելերի կտրում, դուրս քաշում կտորից:</p> |

| | |
|---|---|
| | <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Թելքաշ ասեղնագործության տեսակները և առանձնահատկությունները: Այնթապի ասեղնագործության զարդանախշեր, ✓ Նախնական էսքիզ և նախշերի կոմպոզիցիա, ✓ Գործվածք, թելեր, մկրատ և օժանդակ պարագաներ, ✓ Հենքի թելերի հաշվարկի կատարում և թելերի կտրում ու դուրս քաշում, ✓ Պարզ եւ բարդ թելքաշերի նախշեր, ✓ Ասեղնագործության կատարում և վերջնամշակում, <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պարզ եւ բարդ թելքաշերի տեսակներով կատարված նմուշների գործվածքներ, թելեր, այլ օժանդակ պարագաներ, ձեւավորած պաստառներ, մասնագիտական գրականություն և համացանց:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p> | <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p> |
| <p>Ուսումնառության արդյունք 7</p> | <p>Կատարել Մարաշի հյուսված կարով ասեղնագործություն</p> |
| <p>Կատարման չափանիշներ</p> | <ol style="list-style-type: none"> 1) ներկայցնում է Մարաշի ասեղնագործության 2 ձևերը՝ հյուսված կար/հյուսքակար/ և հարթակար, տարբերակում է նախշերը, առանձնահատկությունները, 2) գծագրում է Մարաշի հյուսված կարի պարզ և բարդ զարդանախշերը, 3) կազմում է էսքիզ տվյալ զարդանախշերի գծագրերով, կառուցում կոմպոզիցիա, կատարում գունային լուծում, 4) ընտրում է կտոր և թելեր, փոխանցում է էսքիզը գործվածքին, կամ գծագրում միանգամից կտորի վրա համապատասխան չափումներ անելով, 5) ճիշտ է ասեղնագործում Մարաշի հյուսված կարի պարզ և բարդ նախշերը, 6) կատարում է վերջնամշակման աշխատանքները: |

| | |
|--|--|
| <p>Գնահատման միջոցը</p> | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ պետք է ներկայացնի Մարաշի ասեղնագործության տեսակները և առանձնահատկությունները: Գործնական առաջադրանքի ժամանակ կհանձնարարվի գծագրել Մարաշի հյուսված կարի պարզ և բարդ զարդանախշերը և ասեղնագործել այն:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Մարաշի ասեղնագործության տեսակները և առանձնահատկությունները, ✓ Մարաշի հյուսված կարի պարզ և բարդ զարդանախշեր, ✓ Կոմպոզիցիայի կառուցում և գունային լուծում, ✓ Էսքիզի փոխանցում գործվածքին, ✓ Ասեղնագործում և վերջնական մշակում: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական եւ գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ <<Մարաշ>> -ի ասեղնագործության տեսակով կատարված նմուշներ, գործվածքներ, թելեր, այլ օժանդակ պարագաներ, ձեւավորած պաստառներ, մասնագիտական գրականություն և համացանց:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p> | <p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ</p> |
| <p>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԺԱՆՅԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</p> | |
| <p>Մոդուլի դասիչը</p> | <p>ԱՍՂ-ԺՆԳ-4-20-009</p> |
| <p>Մոդուլի նպատակը</p> | <p>Մոդուլի նպատակն է ուսանողին ծանոթացնել ժանեակագործության պատմամշակութային ակունքներին և արդի ժանեակագործության զարգացման ուղղություններին: Ձևավորել ժանյակի տեսակներով ձեռագործ կատարելու կարողություններ:</p> |
| <p>Մոդուլի տևողությունը</p> | <p>72 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 16 ժամ</p> |

| | |
|-------------------------------------|---|
| | գործնական աշխատանք՝ 56 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԱՍԴ-ԺՆԳ-4-20-001 «Ասեղնագործության և ժանեկագործության նյութերը, գործիքները և օժանդակ պարագաները» և ԱՍԴ-ԺՆԳ-4-20-002 «Գծանկար և գունանկար կատարելու կարողություններ» մոդուլները: |
| Ուսումնառության արդյունքները | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնի ժանեկագործության պատմությունը և արդի զարգացման ուղղությունները, 2. գործի հայկական ասեղնագործ ժանյակ, 3. գործի հելունագործ ժանյակ, 4. ներկայացնի ձեռագործ ժանյակների տեսակները, գործիքները և գործել ժանյակի ընտրած տարբերակը: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Ներկայացնել ժանեկագործության պատմությունը և արդի զարգացման ուղղությունները |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ժանեկագործության տարբեր ձևերը, դասակարգումը, պատմությունը, 2) տարբերակում է ժանյակների տեսակները և հիմնական անվանումները /մեքենայական ժանյակ, քիմիական ժանյակ, եվրոպական ժանյակների տեսակներ, ասեղնագործ ժանյակների տեսակներ, տարբեր գործիքներով պատրաստված ժանյակների տեսակներ, տարբեր թելերից պատրաստված ժանյակներ/, 3) բացատրում է ժանյակների զարդանախշերի կառուցվածքը, հանգույցների և հյուսքերի ձևերը, տարրերը, 4) ներկայացնում է հայկական ժանյակների տեսակները, առանձնահատկությունները և դասակարգումը /հայկական ասեղնագործ ժաանյակ, հելունագործ, շյուղագործ, մաքրք, մեծ մաքրք /թողի գործ/, գորբենակ /ճանպարկ/, Այնթապ/, 5) ներկայացնում է ժանեկագործության արդի զարգացման ուղղությունները, 6) նկարագրում է ժանյակների կիրառման ոլորտները: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողը պետք է ներկայացնի ժանեկագործության տարբեր ձևերը, պատմությունը, ասեղնագործ ժանյակների տեսակները, տարբեր գործիքներով և |

| | |
|--|--|
| | <p>թելերով պատրաստված ժանյակները: Բացատրի ժանյակների զարդանախշերի կառուցվածքը, հանգույցների և հյուսքերի ձեւերը:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են`</p> <ul style="list-style-type: none"> ✓ Ժանեկագործության դասակարգումը և պատմությունը, ✓ Ժանյակների տեսակները և հիմնական անվանումները (մեքենայական, քիմիական և եվրոպական ժանյակների տեսակներ), ✓ Ժանյակների զարդանախշերի կառուցվածքային ձևերը, ✓ Հայկական ժանյակների տեսակները և առանձնահատկությունները (ասեղնագործ ժանյակ , հելունահյուս և շյուղահյուս ժանյակ, մաքրք, գոբենակ, Այնթապ և այլն), ✓ Ժանեկագործության արդի զարգացման ուղղությունները և կիրառման ոլորտները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ժանեկագործության պատմությունը ներկայացնող անհրաժեշտ մասնագիտական գրականություն և համակարգիչ: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում` 8 ժամ |
| Ուսումնառության արդյունք 2 | Գործել հայկական ասեղնագործ ժանյակ |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) ներկայցնում է հայկական ասեղնագործ ժանյակի պատմությունը, զարդանախշերի տեսակները, Վանի և Կարինի ժանյակները, 2) կազմում է նախատեսվող իրի էսքիզը և զարդանախշերի դասավորությունը, 3) ճիշտ է կատարում հայկական ասեղնագործ ժանյակի հիմնական հանգույցը` օղակ-հանգույց, 4) ընտրում է և կատարում հայկական ասեղնագործ ժանյակի հիմնական զարդանախշերը, նվազագույնը 5 նախշ, 5) ճիշտ է կատարում Վանի ասեղնագործ կլոր ժանյակը: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Հարց ու |

| | |
|--|---|
| | <p>պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի հայկական ասեղնագործ ժանյակի պատմությունը, զարդանախշերի տեսակները, Վանի և Կարինի ժանյակները: Գործնական աշխատանքի ժամանակ պետք է կատարի էսքիզ՝ նախատեսված ժանյակին համապատասխան, կատարի ասեղնագործ ժանյակի հիմնական կուրթերը և հանգույցները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • Հայկական ասեղնագործ ժանյակի զարդանախշերի տեսակները, Վանի և Կարինի ժանյակներ, • ժանյակին համապատասխան էսքիզ և զարդանախշերի դասավորություն, • Հայկական ասեղնագործ ժանյակի կառուցվածքային ձևերը, • Հայկական ասեղնագործ ժանյակի հիմնական զարդանախշերը, • Վանի ասեղնագործ կլոր ժանյակ: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ասեղնագործ ժանյակի պատրաստի նմուշներ , ասեղներ, թելեր , գունավոր պաստառներ , մասնագիտական գրականություն և համացանց:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 20 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 3 | <p>Գործել հելունագործ ժանյակ</p> |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) կազմում է նախնական էսքիզ զարդանախշերի կոմպոզիցիայով և գունային լուծումներով, 2) կազմում է հելունով հյուսքի գծագիրը, տարբերակում պայմանական նշանները, ճիշտ է օգտվում ձևավորված աղյուսակի գծագրից և պայմանական նշաններից, 3) ընտրում է թելերը, հելունի տեսակը, օժանդակ պարագաները հելունով ժանյակ կատարելու համար, 4) գործում է գծագրերի նախշերը ճիշտ հատահաշվարկով, 5) ճիշտ և կոկիկ է կատարում հելունով ժանյակի տարրերը և զարդապատկերները, |

| | |
|--|--|
| | <p>6) ճիշտ է կատարում միացման եղանակները՝ պահպանելով համաչափությունը,</p> <p>7) ձևավորում է աշխատանքը և կատարում վերջնամշակումը:</p> |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է կատարել էսքիզ՝ զարդանախշերի կոմպոզիցիայով, գունային լուծումներով և հելունով հյուսքի գծագիր՝ պայմանական նշաններով :</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ էսքիզ զարդանախշերի կոմպոզիցիայով և գունային լուծումով, ✓ Հելունով հյուսքի պայմանական նշանները, ✓ Հելունով ժանյակ կատարելու համար հելունի տեսակներ, թելեր և օժանդակ պարագաներ, ✓ Հելունով ժանյակի կատարում հաշվարկով, ✓ Զարդանախշերի միացման եղանակները և վերջնամշակում: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հելունահյուս ժանյակի պատրաստի նմուշներ, հելուններ, թելեր , մասնագիտական գրականություն և համացանց:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>գործնական աշխատանք՝ 18 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 4 | <p>Ներկայացնել ձեռագործ ժանյակների տեսակները, գործիքները և գործել ժանյակի ընտրած տարբերակը</p> |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) տարբերակում է ժանյակների տեսակները և անվանումները /գրեենակ, մաքոք, մեծ մաքոք /թոռի գործ/, մակրամե, շյուղագործություն /, 2) ընտրում է ժանյակի տեսակը, կազմում է նախնական էսքիզ զարդանախշերի կոմպոզիցիայով և գունային լուծումներով, 3) կազմում է հյուսքի գծագիրը, տարբերակում պայմանական նշանները, ճիշտ է օգտվում ձևավորված աղյուսակի գծագրից և պայմանական նշաններից, |

| | |
|---|--|
| | <p>4) ընտրում է տվյալ ժանյակը հյուսելու համար համապատասխան գործիքը /մաքոք, գոբենակ, շյուղ, մակրամեի օժանդակ պարագաներ/, տիրապետում է ընտրած գործիքի հետ աշխատելու հնարքներին,</p> <p>5) ընտրում է թելերը, օժանդակ պարագաները,</p> <p>6) գործում է տվյալ ժանյակի տեխնոլոգիայով նախատեսված հիմնական հանգույցը, հանգույցները, հյուսքերը, զարդանախշերի ձևերը, կատարում է անհրաժեշտ գործողությունը,</p> <p>7) գործում է նախշերը կոկիկ և ճիշտ հատահաշվարկով, էսքիզին և գծագրին համապատասխան,</p> <p>8) ձևավորում է աշխատանքը և կատարում վերջնամշակումը:</p> |
| <p>Գնահատման միջոցը</p> | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարության հիման վրա: Հարց ու պատասխանի ժամանակուսանողին հանձնարարվելու է տարբերակել ժանյակի տեսակները (գոբենակ, մաքոք, մեծ մաքոք, հելուն, շյուղ) և անվանումները: Գործնական հանձնարարության ժամանակ ուսանողը ընտրած ժանյակին համապատասխան պետք է կատարի էսքիզ զարդանախշերով, հյուսքի գծագիր պայմանական նշաններով: Կատարի անհրաժեշտ հյուսքերը և հանգույցները զարդանախշերի ձևը ստանալու համար:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ ժանյակների տեսակները և անվանումները (շյուղագործություն, հելունագործություն, ասեղով կատարվող ժանյակ, մաքոք և գոբենակ), ✓ էսքիզ զարդանախշերի կոմպոզիցիայով և գունային լուծումով, ✓ Գծագիր պայմանական նշաններով, ✓ ժանյակի տեխնոլոգիայով հյուսքերի, հանգույցների, կութերի կատարում, ✓ ժանյակի հյուսում գծագրին համապատասխան և վերջնամշակում: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| <p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p> | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ասեղներ, մաքոք, գոբենակ, հելուն, շյուղեր, մաքրամեի համար օժանդակ պարագաներ:</p> |
| <p>Ուսուցման երաշխավորված</p> | <p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> |

| | |
|--|---|
| Ժամաքանակը | գործնական աշխատանք՝ 18 ժամ |
| ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳԵՂԱՐՎԵՏՏԱԿԱՆ-ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ» | |
| Մոդուլի դասիչը | ԱՍՂ-ԺՆԳ-4-20-010 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կարողություններ և հմտություններ գեղանկարչական հարթակար կատարելու համար: |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 16 ժամ գործնական աշխատանք՝ 56 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԱՍՂ-ԺՆԳ-4-20-001 «Ասեղնագործության և ժանեկագործության նյութերը, գործիքները և օժանդակ պարագաները», ԱՍՂ-ԺՆԳ-4-20-002 «Գծանկար և գունանկար կատարելու կարողություններ» մոդուլները: |
| Ուսումնառության արդյունքները | Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնի կերպարվեստի տեսակները, 2. ներկայացնի գեղանկարչության ժանրերը, 3. կատարի գեղարվեստական-գեղանկարչական ասեղնագործություն՝ նախընտրած ժանրով: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Ներկայացնել կերպարվեստի տեսակները |
| Կատարման չափանիշներ | 1) ներկայացնում է համաշխարհային արվեստի պատմության փուլերը, արվեստի ճյուղերը, 2) ներկայացնում է կերպարվեստի տեսակները, 3) ներկայացնում է կերպարվեստի դերը մշակույթի զարգացման մեջ: |
| Գնահատման միջոցը | Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի համաշխարհային արվեստի պատմության ճյուղերը , կերպարվեստի տեսակներն ու դերը մշակույթի զարգացման մեջ: |

| | |
|--|--|
| | <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համաշխարհային արվեստի պատմության զարգացման փուլերը, ✓ Կերպարվեստի տեսակները (գեղանկարչություն, գրաֆիկա, ճարտարապետություն և քանդակագործություն, դեկորատիվ կիրառական արվեստ), ✓ Կերպարվեստի դերը մշակույթի զարգացման մեջ: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | <p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, ինչպես նաև համացանցից օգտվելու հնարավորություն:</p> |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | <p>տեսական ուսուցում՝ 8 ժամ</p> |
| Ուսումնառության արդյունք 2 | <p>Ներկայացնել գեղանկարչության ժանրերը</p> |
| Կատարման չափանիշներ | <p>1) ներկայացնում է գեղանկարչության ժանրերը, նկարագրում է առանձնահատկությունները, 2) ներկայացնում է տարբեր ժանրերի նկարիչների կենսագրությունը և ստեղծագործությունները:</p> |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի միջոցով: Հարց ու պատասխանի ժամանակ ուսանողը պետք է ներկայացնի գեղանկարչության ժանրերը և տարբեր ժանրերի նկարիչների կենսագրությունը և ստեղծագործությունները :</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Գեղանկարչության ժանրերը և առանձնահատկությունները (բնանկար, նատյորմորտ, դիմանկար, կենցաղային, կրոնական, պատմական, անիմալիստական մանրանկարչություն այլն), ✓ Տարբեր ժանրերի նկարիչների կենսագրությունը և ստեղծագործությունները, (բնանկարի ժանր՝ Մարտիրոս Սարյան, Գեորգ Բաշինջաղյան, նատյուրմորտի ժանր՝ Զաքար Զաքարյան, կրոնական ժանր՝ Նաղաշ Հովնաթան, Ռաֆաել Սանտի, կենցաղային ժանր՝ Ժան Բատիստ, Սիմեոն Շարդե, մանրանկարչության ժանր՝ Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ և այլն: |

| | |
|--|--|
| | Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ: |
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, նկարիչների կատարած աշխատանքներով ցուցադրական պաստառներ, համացանց: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | տեսական ուսուցում՝ 8 ժամ |
| Ուսումնառության արդյունք 3 | Կատարել գեղարվեստական-գեղանկարչական ասեղնագործություն՝ նախընտրած ժանրով |
| Կատարման չափանիշներ | <ol style="list-style-type: none"> 1) կատարում է էսքիզի ընտրություն, 2) մշակում և գունավորում է էսքիզը, 3) ընտրում է համապատասխան գործվածք, թելեր, օժանդակ պարագաներ, պատրաստում աշխատատեղը, 4) փոխանցում է էսքիզը գործվածքին, 5) կատարում է նկար-ասեղնագործություն ստանալու ամբողջ աշխատանքը, 6) կատարում է աշխատանքի վերջնամշակումը: |
| Գնահատման միջոցը | <p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է ընտրել համապատասխան նկար, կատարել էսքիզ և գունավորել:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ էսքիզի մշակում և գունավորում, ✓ Համապատասխան գործվածքի , թելերի, օժանդակ պարագաների (ձգիչ-под рамник, կարիչ-степлер) ընտրություն, ✓ Գործվածքի ձգում ձգիչին , էսքիզի փոխանցում գործվածքին, ✓ Նկար ասեղնագործության կատարում եվ վերջնամշակում: <p>Արդյունքը գնահատվում է դրական , եթե ուսանողը առաջադրանքները հիմնականում կատարում է անսխալ:</p> |

| | |
|--|---|
| Մեթոդաբանությունը և ռեսուրսները | Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ընտրված նկար, գործվածք, թելեր, մկրատ, ձգիչ(под рамник), կարիչ (степпер), պատճենահանման թուղթ և գնդասեղներ: |
| Ուսուցման երաշխավորված ժամաքանակը | գործնական աշխատանք՝ 56 ժամ |